№ 245 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8 № 245

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ"

Լրագիրը արժէ 2 րուբլի։ Մի ամսվանը 1 րուբլի։

Պօղոս, Անթառամ, Գասպար, Գարեգին, Արծրունի, Հայկանոյշ և Կատարինէ Յովասափեանները, Աղէքսան և Գոհարվարդ Յոֆսաթանեանները խորին վշտով յայտնում են ի գիտութիւն բարեկամների և ծանօթների, առաջին երկուսի որդի, երրորդ, չորրորդ և հինգերորդի եղբօր, վեցերորդ և եօթներորդի տեգր, Յոֆսաթանեաններից—առաջինի աներոջ որդի, երկրորդի եղբօր՝

ԱՐՄԵՆԱԿ ՅՈՎԱՍԱՓԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին. յուղարկաւորութիւնը հինգշաբթի, ամսիս 9-ին, առաւօտեան ժամի 10-ին, սեփական բնակարանից (Կվիրիլսկի փողոց № 6) դէպի Կուկիայի Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցին։

Ցաւօք սրտի յայտնում ենք, որ նոյեմբերի 5-ին Միքայէլեան հիւանդանոցում հոկտեմբերի 18-ին չարագործների հասցրած վէրքերից վախճանվեց «Արշալոյս» խմբի մեր ընկեր՝ Պուլանըր-Շէյխաղուլ գիւղացի՝

ՕՀԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ

Յուղարկաւորութիւնը կը լինի այսօր, նոյեմբերի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին իր բնակարանից (Վերա) դէպի Վերայի գերեզմանատուն։ Մեր ընկերներին խնդրում ենք ներկայ լինել յիշատակը յարգելու համար։

Մի խումբ ընկերներ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ"

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ.։ Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական (3 ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.), երկրորդ վճարը լինում է մայիսին։ Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանուորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախանութում։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

1907 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան ձրիաբար նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բանող յայտարարութեան համար 10 ր., ½ եր. 5 ր., ¼ եր. 2 ր., տողատեղ (կորպուս)—40 կ.։

Խմբագիր՝ Լեւոն Սարգսեան

առ. 5—10

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Նոյեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, Ախալցխայի հաշտարար դատարանում

ԿԸ ԾԱԽՎԻ

Աբասթումանում գտնվող եռայարկ

ՔԱՐԷ ՏՈՒՆ,

որի պատերը ծեփած են կրով, իսկ տանիքը ծածկված է թիթեղով։ Իւրաքանչիւր յարկը բաղկացած է վեց սենեակներից՝ բոլոր յարմարութիւններով։ Տունը գրաւ է դրված Ախալցխայի Միրաքեանի մօտ 5,500 րուբլով։ Աճուրդը, մի քանի հանգամանքների պատճառով, կը սկսվի 1900 րուբլուց։ Մանրամասն ցուցակագիրը և պայմանները կարելի է տեսնել Ախալցխայում, հաշտարար դատարանում, իսկ Թիֆլիսում խնամակալ Շաղուբատովի մօտ՝ երեկոյեան 5—7 ժամը, Միքայէլեան փողոց, № 78։

առ. 1—1

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ.
երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (Հ. ու. 2.) 6—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր սկզբունք. Բողոքներ. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Ընտրութիւնների շուրջը. Քուէ մուրացկաններ. Էջմիածնի վերջին դէպքերը. Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտետի որոշումը. Բարձրագոյն դպրոց Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Պլեխանովի նամակը. Անիծեալ հարցը. Նաւթային համագումարը. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Կարսից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

I

Երբ որ մենք խօսում ենք անհատի անձեռնմխելիութեան, մտքի, խօսքի ազատութեան և ուրիշ այդ տեսակ գաղափարների մասին, մենք ընդունում ենք այդ գաղափարները իբրև ընդհանուր սկզբունք, իբրև ամենի համար գոյութիւն ունեցող բարիք, որից պէտք է օգտվեն բոլոր մարդիկ, ինչ կուսակցութեան և համախմբման էլ նրանք պատկանեն։

Այդ տեսակէտով էլ մենք նայել ենք և նայում ենք այն բոլոր երևոյթների վրա, որոնք կատարվում են մեր շուրջը։ Բռնութիւնը, ում ձեռքով էլ նա կատարվի, մի պատուհաս է, որի դէմ մենք մաքառել ենք և պէտք է մաքառենք։

Կան խմբեր, որոնք օրինակ, բռնութեան վերաբերմամբ պահպանում են երկձև քաղաքականութիւն և նրան գրկախառնում են, երբ նա ձեռնտու է իրանց և բողոքում են, երբ նա խոչընդոտ է իրանց համար։

Դա մի հակահասարակական գժբաղդ հասկացողութիւն է սկզբունքների մասին, որ դժբաղդաբար բազմաթիւ երկրպագուներ է գտել մեզանում։

II

Մենք բողոքում ենք բռնութեան դէմ ինչ տեղ և ինչ ձևերով էլ երևան գայ այդ բռնութիւնը։

Մենք բողոքեցինք, երբ բռնութիւնը վտանգեց ժողովրդի ազատ քուէն և ընտրութիւնները դարձրեց մի ծաղր ժողովրդի ազատ կամեցողութեան վրա։

Մենք բողոքեցինք, երբ բռնութիւնը անարգ պատժի և անպատւութեան ենթարկեց մեր գիւղական եղբայրներին և քոյրերին։

Մենք բողոքեցինք, երբ բռնութիւնը յանդգնեց արգելք հանդիսանալ և սպառնալիքներ անել մարդկանց կարդալու այս կամ այն լրագիրը։

Մենք բողոքեցինք, երբ վայրենի կրքերով մոլեգնած ամբոխը Թքահարութեամբ անարգեց Սուքիաս արքեպիսկոպոսին։

Մենք բողոքեցինք ամեն մի դէպքում, երբ նկատեցինք, որ բռնութիւնը իր սպառնալիքներով, իր բիրտ ձևերով ձգտում է ճնշել մարդկանց անհատականութիւնը և անարգել նրանց անձնաւորութիւնը։

III

Մեզ համար նշանակութիւն չունէր այն, թէ ով է այն անձը, որի քուէն վտանգված է,—պահպանողական է նա, ազատամիտ, թէ յեղափոխական։ Այստեղ կարևոր էր սկզբունքը, կարևոր էր երևոյթի ներքին իմաստը։

Մենք ամենևին չը գիտենք թէ ինչ ուղղութեան, ինչ դաւանանքի տէր են այն մեր քոյրերը, որոնք ենթարկվեցին սարսափելի անարգանքի։ Այստեղ կարևոր էր երևոյթը և ոչ այն, թէ որքան մեզ համար համակրելի և հակակրելի է Թշուառութեան ենթարկված անձնաւորութիւնը։

Մեզ համար ոչ մի գին չունէր թէ ով է խաղացնում Վեհափառին, նրան շահագործում, մոլորեցնում և խաբում։ Ով և լինէր այդ անձը, նա չարիք էր։ Եւ անկասկած՝ մեզ չը հրապուրեց այն բանը, որ սինոդի անդամութեան թեկնածուներ առաջարկված էին Մեսրոպ, Եղիշէ և Մխիթար վարդապետները, որոնք անարժաններ չեն ճանաչված եղել մեր կողմից։ Անձերի խնդիրը չէր այստեղ, այլ սկզբունքի։

IV

Բռնութիւնը բռնութիւն է և իբրև այդպիսին նա պէտք է վերացվի հասարակական գործերից։

Մեզ համար զգալի էր բռնութեան այն ծանր լուծը, որ դրել էր մեր վրա պետական հին ռէժիմը և որի արձագանքները դեռ ուժեղ կերպով ջլատում են հասարակական կեանքի կանոնաւոր ընթացքը։

Ժողովուրդը, որ ճմլվել և մաշվել է հարիւրաւոր տարիների բռնութիւններից, ամենևին չէ կարող տանել նոր բռնութիւններ, որոնք այս անգամ հայրենի ձեռքերով էին ստեղծվել, բայց խորանում էին դէպի կեանքի ամենանուրբ խորշերը։

Եւ անկասկած, եթէ ժողովուրդը ինքը պէտք է լինի տէր ու տնօրէն իր բոլոր գործերի, կարևոր է, որ նա ազատ լինի ամեն տեսակ ճնշումներից և հնարաւորութիւն ունենայ ազատ խօսել, քննել, գործել և կարգադրել իր բոլոր գործերը։ Այդ է պահանջում ժողովրդի ազատութեան գաղափարը։

V

Մեր կեանքը ամեն օր մեր առաջն է դնում հասարակական խնդիրներ և գործեր։

Ընտրութիւններ մեր հասարակական հիմնարկութիւններում, ընտրութիւններ Պետական Դումայի համար, որոշ դիրքեր մի շարք հանրային գործերում—այդ բոլորը պէտք է պահանջէ զանազան անձերից և մարդկանց խմբերից ներգործական մասնակցութիւն հասարակական կեանքում։ Մենք մշտական հրաւէր և կոչ ենք կարդացել հասարակութեան—լինել եռանդուն գործող ոյժ, բայց միևնոյն ժամանակ բողոքել ենք և պէտք է բողոքենք, երբ տեսնենք, որ մարդիկ ձգտում են առաջ տանել իրանց գործերը դիմելով սպառնալիքների, բռնութիւնների և կասկածելի միջոցների։

Բիրտ ոյժը, բռնութիւնը չափազանց մեծ վնաս են տուել մեզ և կարող են բոլորովին վտանգել ժողովրդական ազատութիւնը։

Մաքուր միջոցներով և գաղափարների ոյժով միայն պէտք է մրցել հասարակական պայքարների մէջ։

Ա. Քալանթար

ԲՈՂՈՔՆԵՐ

Մենք, ներքոյ ստորագրեալներս, միացնում ենք մեր ձայնը այն բողոքին, որ արվեց Էջմիածնում արքեպիսկոպոս Սուքիաս Պարզեանի վրա անողորմ բռնութիւն կատարելու առիթով, և որը տպված է «Մշակ» լրագրի № 243-ում, որով պահանջվում է հասարակական խիստ և անկողմնապահ քննութիւն։

Ինժեներ Կիրակոսեան, Դ. Ենգիբարեան, Գ. Եարալեան, Յ. Փիրալեան, Ա. Դաւթեան։

—

Կարդալով Էջմիածնում ծերունի մարդ-անհատի վրա կատարած խուժանի զազրելի ինքնադատաստանի մասին, բողոքելով այդ տեսակ Թքասպանութեան զզուելի ոճիրի դէմ, մենք պահանջում ենք հասարակական լայն դատաստան՝ գործի իսկական պատկերը պարզաբանելու համար։

Յ. Կարապետեան, Կ. Շիրինեան, Մ. Համբաձումեան, Ս. Գալստեան, Յ. Տէր-Գրիգորեան, Ա. Խաչիկեան, Ս. Շահվերդեան, Վ. Եգեկեան, Ս. Մնացականեան, Զախմախազեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Գանձակ, նոյեմբերի 6-ին

Ջիվանշիրի գաւառապետ Ֆլէգոնտովի սպանութեան մէջ մեղադրվող նախկին ցէհ Յուսիման-բէկը (?) դատապարտվել է դատարանից մահվան պատժի կախաղանի միջոցով։ Դատարանը որոշել է միջնորդել Թեթևացնելու նրա դատավճիռը։

(Հեռ. Գործ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղաթարի գործարանների բազար, հոկտեմբերի 26-ին։ Խալաջ գիւղի Թուրքերը օգոստոսի 12-ին Ղաթարի գործարաններից Գօրիս պօստ տանող երեք ստրաժնիկներին սպանել էին և հրացանները ու ձիերը վերցրել, բայց որովհետև ստրաժնիկներից մէկը լեզգի էր, իսկ երկուսը ռուս, դրա համար էլ ոստիկանութիւնը այդ սպանութիւնը հայերին էր վերագրում աւելի, քան Թուրքերին։ Շնորհիւ տեղական պրիստաւի ձեռք առած խիստ միջոցների, այսօր լեզգի ստրաժնիկների միջնորդութեամբ դիակները հանվեցին Խալաջ գիւղից և բերվեցին բազարը։ Ձերբակալված են մի քանի խալաջցի Թուրքեր, որոնք մեղադրվում են այդ սպանութեան համար։ Ասում են, որ յանցաւորներին կը դատեն զինուորա-դաշտային դատարանի միջոցով։

Ղափան մհալի Թուրքերի Թիւը տասնապատիկ աւել է հայերից. նրանց մեծ մասը ապրում է Ղափանի ներքևի մասերում և պարապում է երկրագործութեամբ. Ղաթարի գործարանների բազարը Ղափան մհալի կենտրոնն է. ամեն տարի, սկսած օգոստոս ամսից մինչև մայիսի վերջը, Թուրքերը օրական միջին Թւով 500 պուդ ցորեն, գարի, բրինձ էին բերում բազարը և վաճառում կարիքաւոր հայերի վրա։ Այս տարի Ղափանում խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ, սկսած դեկտեմբերի 1-ից մինչև օրս, Թուրքերը ոչ մի հատ ցորեն, գարի կամ բրինձ չեն բերում բազարը հայերին ծախելու։ Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Թուրքերի բէգերը, աղալարները ստիպում են Թուրք ժողովրդին ոչինչ չը ծախել հայերի վրա, հակառակ դէպքում խիստ ծեծի և պատժի են ենթարկում նրանց։ Մի Թուրք հաւատացնում էր, որ ինքը սաստիկ ծեծի է ենթարկվել մի բեռը կաղամբ հայերին ծախելու համար։ Ամեն տարի ցորենի պուդը ծախվում էր սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում 1 ր. 10 կ.—1 ր. 20 կ., իսկ այժմ պուդը 2 ր. էլ չէ ճարվում. գարին ծախվում էր 70—80 կ., իսկ այժմ 1 ր. 60 կ. էլ դժուար է ճարվում. բրինձը 1 ր. 80 կ.—2 ր. էր ծախվում, այժմ 4 րուբլի է, այն էլ չը կայ։ Ղափանի հայերի մի չորրորդական մասը համարեա կարող է իր ամբողջ տարվայ պաշարն ունենալ, իսկ մնացած երեք չորրորդականը կարիք է զգում և հէնց սեպտեմբերից սկսած հաց է որոնում։ Եթէ քաղաքներից Ղափան մհալի համար ալիւր չուղարկվի, կարիք զգացող ղափանցին սովի կը մատնվի։ Քաղաքներում՝ օտարութեան մէջ գտնվող հարուստ ղափանցիներ! Ձեր հայրենակից եղբայրները ձեր օգնութեանն են կարօտ. շտապեցէք ալիւր ճանապարհել ձեր հայրենակից ղափանցի եղբայրներին սովից ազատելու համար, որով մեծ բարեգործութիւն արած կը լինէք։

Մի քանի աղբիւրներից տեղեկանում ենք, որ մեծ Թւով Թուրքեր են հաւաքվել «Երասխի» շրջակայքի գիւղերը. ասում են յիշեալ Թուրքերը Տաճկաստանից են հրաւիրված և հայերի վրա նորից յարձակում են գործելու՝ իրանց վրէժը առնելու համար։ Որքան ճիշտ է՝ ստուգել չեմ կարող. սպասենք և տեսնենք։

Սողոմոն Յովհաննիսեանց

—

Դերբենդ, հոկտեմբերի 31-ին։ Ամսիս 29-ին, կիրակի օրը, հայոց ուսումնարանում տեղի ունեցաւ գրադարան-ընթերցարանի վարչութեան տարեկան հաշուետւութիւնը։

Ժողովը բաց արեց վարչութեան գանձապահ Ղեւոնդ Պապովեանը, որի կարդացած հաշուից երևաց, որ ընթերցարանն ունեցել է 71 անդամ. մուտք եղել է ընդամենը 359 րուբլի 92 կօպ., որից ամսավճար՝ 215 ր. 50 կօպ., ներկայացումներից՝ 83 ր. 72 կօպ., նուէրներ՝ 60 ր. 70 կօպ.։ Ծախս է եղել լրագիրների, գրքերի, պահարանների, աթոռների, դաշկինը ներկելու, ծառայի և այլ մանր-մունր բաների համար՝ 355 ր. 25 կօպ.։ Առձեռն դրամ մնում է 4 ր. 67 կօպէկ և պարտիք՝ 88 րուբլի։

Նուէրներ ստացված են հետևեալ անձնաւորութիւններից գրքերով՝ օր. Յովհաննիսեանից, տիկ. Ասրիեանից, օր. Ազարեանից, Յ. Սախարեանից, Յ. Բաղդասարեանից, օր. Գոզալեանից և մի բարերարից, որ կամեցել է իր անունը անյայտ պահել. սա նուիրել է 113 րուբլու գրքեր—244 հատոր։ Վաճառական Յ. Գրիգորեանը նուիրել է գրասեղանի պարագաներ և մի դիւժին աթոռ։

Հաշուետւութիւնից յետոյ տեղի ունեցան ընտրութիւններ. վարչական հին կազմից վերընտրվեցան՝ Ղեւոնդ Պապովեան, Յ. Շահիջանեանց և օր. Հ. Գոզալեան, իսկ նորեր ընտրվեցան՝ Բ. Ասրիեանց, Յ. Իսագուլեանց, Ս. Միրզախանեանց և Տիգրան քահ. Վարդանեանց։

Յոյս ունենք, որ գրադարան-ընթերցարանը հեռու կը մնայ կուսակցական պայքարից և այս կամ այն անձնաւորութեան քմահաճոյքներին խաղալիք չի դառնայ։ Ընկերներ, անկեղծութիւն և համերաշխութիւն։

Տ. Վ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէտի քարտուղարութիւնը ընտրութիւնների առիթով հրատարակել է հետևեալ կոչը. «Մօտենում են երկրորդ Դումայի ընտրութիւնները։ Աչքի առաջ ունենալով նրա կազմի կարևորութիւնը, հայրենիքի ապագայ ճակատագրի համար հարկաւոր է, որպէսզի նրանք, որոնք օրէնքով իրաւունք ունեն մասնակցելու, մասնակցեն ընտրութիւններին։ Յանուն հայրենիքի լաւ ապագայի կենտրոնական կոմիտէտի քարտուղարութիւնը կոչ է անում բոլոր քաղաքներին կատարելու իրանց քաղաքացիական պարտականութիւնը։ Դրա համար պէտք է յիշել և հետևեալը.

1) Իւրաքանչիւր մարդ պէտք է հոգ տանէ իր անունը մտցնելու գաւառական կամ քաղաքային վարչութիւնների միջոցով կազմվող ընտրողական ցուցակների մէջ։ Ում անունը որ մտցրված չէ, նա երկու շաբաթվայ ընթացքում կարող է բողոք ներ[illegible] գաւառական ընտրողական գործերի համար կազմված մասնաժողովին, իսկ քաղաքներում, որոնք ունեն առանձին ներկայացուցչութիւն,—նահանգական ընտրողական մասնաժողովին։ 2) Գիւղական հասարակութիւնները պէտք է օգուտ քաղեն իրանց այն իրաւունքից, որի հիման վրա իւրաքանչիւր տասը ծուխի կողմից կարող են վերընտրել մի ներկայացուցիչ վօլօստնոյ ժողովին մասնակցելու համար, և ընարեն այնպիսի հաստատակամ մարդկանց, որոնք ընդունակ են ջերմ պաշտպան կանգնել գիւղացիութեան դատին։ 3) Այնտեղ, ուր կան ժողովրդական ազատութեան կուսակցութեան կոմիտէներ, նրանք ցուցմունքներ ու բացատրութիւններ են տալիս ընտրութիւնների մասին, թէ ինչպէս և ինչ պէտք է անել ընտրութիւններին մասնակցելու համար։ 4) Թող իւրաքանչիւրը անձամբ կամ թէ այն անձի միջոցով, որին նա յանձնարարում է, տեղեկանայ՝ մտցրված է նա, արդեօք, ցուցակների մէջ, և եթէ չէ մտցրված, իսկոյն յայտարարութիւն պէտք է տալ գաւառական մասնաժողովին (նահանգական դատարանի գաւառական անդամին)։ Մի՛ յետաձգէք այդ կարևոր գործը, կատարեցէք, հէնց որ կարդալու լինէք այդ յայտարարութիւնը։ Յիշեցէք, որ ով չէ մտցրված ցուցակների մէջ, նա չէ կարող մասնակցել ընտրութիւններին։ Մի՛ խուսափէք, քաղաքացիներ, ձեր պարտականութիւնից. բազմատանջ հայրենիքը պահանջում է ձեզանից մասնակցել ընտրութիւններին։ Խուսափողները պատասխանատու կը լինեն թէ հայրենիքի և թէ ապագայ սերունդի առաջ։ («Р. В.»)

ՔՈՒԷ ՄՈՒՐԱՑՈՂՆԵՐ

I

Անցեալ տարի ծայրայեղ կուսակցութիւնները բոյկոտ յայտարարեցին Դումային։

Մեր Դաշնակցութիւնն էլ սկզբում տարուբերվեց և ապա հետևեց նրանց օրինակին։

Սակայն բոյկոտը ոչ միայն ազգաբնակութեան, այլ և բոյկոտական կուսակցութեան անդամների վրա թողեց մի օտարոտի և թոյլ ազդեցութիւն։

Բոյկոտականները շուտով զգացին, որ իրանց արածը ակներև սխալ էր։

Եւ ահա այսօր Դաշնակցութեան օրգան «Երկիր»-ը վկայելով, որ «այժմ բոլորն էլ մասնակցում են՝ մեծամասնականները, «Բունդը» և P. P. S.-ը (լեհական սոց.-կուսակցութիւնը)» Դաշնակցութիւնն էլ գնում է նրանց շարքում ու բացականչում. «դէպի ընտրողական պայքար»։

Իսկ իր տաքտիկական սխալը, հակասութիւնը հայ հասարակութեան առաջ քողարկելու նպատակով աւելացնում է. «անում ենք այդ քայլը ոչ առանց կշռադատութեան»։ Նրա այդ կշռադատութիւնը ահա թէ ինչպիսի նոր հանգամանքների, երեւակայական Թոթովանքների ու շաղակրատանքների վրա է հիմնված։

«Ռէակցիան յաղթանակում է, ասում է «Երկիր»-ը։ Կադետների վրա դրված յոյսերը բուրժուական դասակարգի կողմից—չարդարացան»...

«Հաւատը դէպի կադետները, դէպի լիբերալները կորել է...»

«Ռէակցիան ժամանակաւորապէս տիրել է, լիբերալները բաւականին վարկաբեկ են եղել։ Առաջիկայ Դումայում ույժերի յարաբերութիւնը կարող է Թեքվել ռէակցիայի ցանկացած ուղղութեամբ և սրբագործել շատ սև, մռայլ երևոյթներ, սպանիչ սկզբունքներ»։

Այդ է «ճնշող, հրամայական նոր հանգամանքը», պատճառը, որ «ծայրայեղ»-սօցիալիստականներին դրդում է մասնակցելու։

Եւ չը նայելով, որ «առաջիկայ Դուման աւելի անհաւատարիմ պատճէն է ներկայացուցչական իսկական մարմնի, սա աւելի մեծ ծամածռութիւն է լինելու, քան անցեալը», այնուամենայնիւ մեր դաշնակցական ղեկավարները գտնում են, որ «պէտք է մասնակցել, եթէ չենք ուզում, որ ռէակցիայի բոլոր ծրագիրները օրէնքի ույժ ստանան և սրբագործվեն «ազգի ներկայացուցիչ» կոչված այդ պարլամենտական այլանդակութիւնից»։

Սակայն ինչո՞ւ մասնակցել։

Եթէ դուք այժմ, անցեալ Դուման գերադաս համարելով հանդերձ առաջիկայից, չէք ամաչում, նոյնիսկ «անել փողոց» անուանել նրան, իսկ Դումա գնալը՝ վնասակար քայլ, մի՞թէ «ներկայի պայմանները» այնքան բարեփոխվել են արդէն, որ սրտացաւ մարդկանց կոչ էք անում «դէպի ընտրողական պայքար»։

Չէ՞ որ անցեալում դուք չէիք ուզում գնալ, որովհետև Դուման իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն չէիք ճանաչում։ Չէ՞ որ ձեր ուզածը մի այնպիսի բան էր, որը լիովին հակասում էր «ներկայ պայմանների» մասին ունեցած ձեր նուրբ ու հեռատես ըմբռնողութեանը։

Ուրեմն ինչ պատահեց այժմ։

Ոչինչ!

Աւելի ևս վատթար հանգամանքներ։

Աւելորդ է ցնցել «կադետների շնորհիւ յուսահատութեան և անտարբերութեան գիրկն ընկածներին»։

Մոռանում էք, որ այդ գեղեցիկ միսիան կադետները կատարեցին անցեալ տարի։ Նրանք ուղղեցին ձեր այն խոշոր սխալը, որով դուք հայ ժողովրդին դէպի պարտազանցութիւնն էիք դրդում։

Ան[illegible] շատ հնարաւորութիւն հայ քաղաքացիական պարտք կատարելու, դուք ինքնասպանութեան էիք դրդում քաղաքացիներին։ Երբ հարկաւոր էր շտապել օգտվելու ընտրողական իրաւունքից, դուք հայ ժողովրդին յետ էիք կասեցնում այդ արտօնութիւնից և անտարբերութեան մատնում։

Մի՞թէ այն ժամանակ հայ ժողովրդի ապագայ վիճակը որոշ կախում չունէր նրանից։

Ո՞ւր է ձեր լօգիկան։

Չէ՞ որ ձեր ասած «միահեծան ինքնակալ բիւրօկրատիզմը» այժմ էլ գոյութիւն ունի և դեռ ուժեղանալու է նորից ևս սև-հարիւրեակային ներկայացուցիչներով։

Ուրեմն ինչո՞ւ էք հնարաւոր համարում «պարլամենտարիզմ» ստեղծել այնտեղ և «ջուրն ու կրակը իրար հետ միաւորել», այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ պուլեմեօտների Թիւը կրկնապատկված է և սուինները աւելի խտացած Դումայի առաջ։

Եթէ այժմ հնարաւոր է այդ բոլորը, ևս առաւել հնարաւոր էր առաջ, երբ օպպօզիցիան ուժեղացել էր, իսկ կառավարութիւնը ահաբեկվել, կազմալուծվել։

Ամենքի համար պարզ է ձեր հակասութիւնը։ Սակայն դուք քաջութիւն չունէք խոստովանելու ձեր տաքտիկական սխալը և անհետևողականութիւնը։ Անշուշտ այդ խոստովանութիւնը վիրաւորական է ձեր «ծայրայեղական» ինքնասիրութեան համար։ Բայց ինչ արած. չէ՞ որ աւելի վատթար մեղադրանք է ձեր դէմը ցցվում—անհաստատակամութիւնը, անկախ համոզմունք չունենալը։ Երբ մեծամասնականները, «Բունդը», P. P. S.-ները մասնակցում են, դուք էլ պէտք է մասնակցէք։ Ահա այն հանելուկը, որին դուք «կշռադատութիւն և նոր հանգամանքներ» անունն էք տալիս։

II

Դաշնակցութեան ղեկավարները մի տարի առաջ իրանց «Թքածը լիզում են» այսօր և ընտրողական պայքարի մէջ մտնում։

Նրա «պրօպագանդիստները, որ կծու քննադատութեան էին ենթարկում Պետական Դուման, մերկացնում Թերութիւնները, ցոյց տալիս նրա յետադէմ բնոյթը, Դումա գնալը վնասակար համարում», այժմ գնում են աւելի պակասաւոր Դումա։

Ողջունում ենք այդ քայլը։

Սակայն միաժամանակ անհասկանալի է թէ ինչո՞ւ են գնում։

Եթէ «կադետներն» ու էս-դէական «փոքրամասնականները» Դումա գնալով վերացրին բիւրօկրատական ֆինանսական ճգնաժամը և խանգարեցին մի երկրորդ մանիֆեստի հրատարակմանը, ինչ հեռատեսութիւն է առաջին սխալը կրկնել, երբ ֆինանսական ճգնաժամը չէ վերացել և փոխառութեան խնդիրը նորից օրվայ պահանջ է դարձել ֆրանսիական կապիտալիստների համար Ռուսաստանին առած իրանց հին պարտքերը ազատելու և կրկնակի տոկոսներ շահելու յոյսերով, մանաւանդ որ «օգտվողը ինքնակալ բիւրոկրատիզմն է»։

Ժամանակ է վերջապէս իրական աչքով նայել կադետների գործունէութեան վրա։ Այդ լեգենդան նորութիւն չէ։ Անցեալ տարվայ իմաստակների սիրած երգն է դա, որ այսօր կրկնվում է նոր վարիանտներով։ Զարմանալի չէր երբ այդ արտասանում էին անցեալ տարի միտինգային ճառախօսները. բայց այդ ուշացած երգը այժմ տեսնել հասարակական օրգանի էջերում և ծիծաղելի է, և ցաւալի։

Ցաւալի է մանաւանդ այն տարօրինակ հասկացողութիւնը, որ ունի նա Դումայի և նրա մէջ գործող ույժերի գնահատութեան մասին։

Դուման դուք անուանում էք «անել փողոց», իսկ նրա փակումը՝ «պատւով դուրս գալ»։

Եւ աւելացնում էք.

«Ճառեցին, անվերջ ճառեցին, մինչև որ բիւրոկրատիան, գրպանն արդէն լեցուն, ձանձրացաւ դատարկ բառերից ու դուրս վռնդեց բոլորին»։

Դա շատ ուղիղ նկատողութիւն է, միայն թէ համապատասխանում է Էջմիածնում ունեցած ձեր գործունէութեանը և ոչ Դումայի։

Բայց ահա Դումայի նշանակութիւնը ինչպէս է բնորոշում ձեզնից աւելի ձեռնհաս «Нов. Путь» լրագիրը։ «Նրա նշանակութիւնը երկրի քաղաքական կեանքում, նրա խոշոր դերը դեմօկրատական շարժման վրա, ահագին ազդեցութիւնը թէ իշխանութեան և թէ երկրի վրա, դրանք այն աստիճանի այժմ ակներև փաստեր են, որ աւելորդ է խօսել անգամ»։

Ահա այդ նշանակութիւնը այժմ են միայն գիտակցում ձեզ նման ֆօկուսնիկները։ Իսկ մասնակցողները այդ հէնց սկզբից ըմբռնեցին ու գնացին։

Անշուշտ չէք մոռացել դեռ թէ ինչպէս ձեր «ագիտատօրները» անցեալ տարի կադետներին դաւաճաններ էին անուանում և ասում էին, որ գնում են կառավարութեան ձեռքին խաղալիք դառնալու, թէև զարմանալի է. ձեր այդ հռետորութիւնը սրտացաւութեան նշոյլ անգամ երևան չը հանեց և դուք չը գնացէք «Դուման դէպի ձախ թեքելու». այժմ գնում էք։

Բարեբախտաբար ձեր կարճատեսութիւնը՝ շողակրատանքները շուտով ակներև դարձան։ Կադետները մնացին ամենամաքուր ու գաղափարական վեհութեան վրա, և եթէ Դուման այսօր այնքան բարձր նշանակութիւն ունի դա կադետների շնորհիւ է։ Այսօր էլ «զիջումների» խօսքերն են անտեղի։

Իսկ թէ ինչու այդ Դուման պաշտպանութիւն չը գտաւ մասսաների կողմից, երբ արձակվում էին, դա շատ բարդ ու լուրջ հարց է։

Կասենք միայն, որ բանւորական կազմակերպված մասսան չը պաշտպանեց, որովհետև նախ՝ որ Դուման իր ստեղծածը և ուժերը չէր, երկրորդ՝ որ զանազան դեմագոգներ դեռ վաղօրօք վարկաբեկ էին արել նրա աչքում այդ առաջին ներկայացուցչութիւնը, և երրորդ՝ որ ամենագլխաւորն է, խոշոր կազմակերպութիւնները այդ միջոցին պառակտվել էին կուսակցական ներքին երկպառակութիւններով ու տարաձայնութիւններով։ Բօյկոտականները և հակաբօյկոտականները այդ ժամանակ պայքարում էին իրար դէմ։ Դա թուլացրել էր կազմակերպված ույժը։

Ինչ վերաբերում է գիւղացիներին՝ նրանք դեռ նոր են միայն ուշքի գալիս, շատ տեղ դեռ նոր են իմանում Դումայի արձակումը, բացի դրանից կազմակերպչական աշխատանքները այժմ են միայն սկսվում, այն էլ շատ աննպաստ հանգամանքներում։ Նրանք էլ չէին կարող պաշտպան դուրս գալ։

Իսկ սոցիալ-դեմօկրատների ձեռնարկած գործադուլը մի այնպիսի Դումայի պատճառով, որը դեռ բացումից առաջ վարկաբեկ էր արված սոցիալիստների կողմից և երկուամսվայ ընթացքում չէր կարող խոր արմատներ գցել ժողովրդի մէջ, հասկանալի է, որ աջողութիւն չունեցաւ։

Այդ բոլորի վրա աւելացրէք և այն, որ կառավարութիւնը արդէն կազմ ու պատրաստ էր կռւելու համար։

Ահա թէ ինչ աննպաստ քաղաքական վիճակ էր ստեղծված այն ժամանակ և որքան նպաստաւոր էր Դումայի արձակման համար։

Չը նայելով որ ռուսական այդ անդրանիկ պարլամենտի երկամսեայ աշխատանքները խոր հետքեր թողեցին ժողովրդի հոգեբանութեան մէջ, այնուամենայնիւ նա գտնվում էր այնպիսի անպաշտպան վիճակում, որ կառավարութիւնը անարգել կերպով կարողացաւ նրան արձակել։

Ահա իրողութիւնը։

Հասկանալի չէ այդ բոլորից յետոյ, թէ ինչու անցեալ տարվայ Դուման գնալը «եղան կորստաբեր իրանց ու միամիտ ժողովրդի համար»։

Եթէ դուք ժխտում էք Դումայի նշանակութիւնը, նրա խաղացած դերը սոսկ իբրև ագիտացիայի մի մեծ զէնք, մի մեծ գործօն, զարմանալի չէ։ Ընդունում ենք՝ որ այնտեղ գնացողներից շատերը բանտարկված են, հալածված, իրաւազուրկ արված. այդ իրողութիւն է, և բանից մեծ մասը այն կադետներն են, որ գնում էին «կառավարութեանը զիջումներ անելու, նրա ձեռքին խաղալիք դառնալու» ձեր կարծիքով. իսկ ինչով կորստաբեր եղաւ միամիտ ժողովրդի համար Դումա գնալը, անհասկանալի է։

Գալով Վիբօրգի կոչին, այդ յեղափոխական ակտի համար այսքանը կասենք, որ իբրև սկզբունք, «ոչ մի կոպէկ հարկ, ոչ մի նորակոչ զինուոր» չը տալու այդ պասսիվ դիմադրութեան կոչը սխալ չէր, բայց գործնական տեսակէտից անհամապատասխան էր ներկայ իրականութեանը. նախ՝ որ զօրքը յեղափոխելու նպատակի համար անհրաժեշտ էր գիտակից նորակոչներով լցնել նրան, միւս կողմից՝ որ ներկայումս մասսան այդ քայլի համար անպատրաստ էր։

Դումայի գործիչները այնքան ազնիւ գտնվեցին, որ ժամանակին այդ քայլի առաջն առան։

Բայց մինչեւ այդ քայլը, որին դրդեցին հէնց իրանք ծայրայեղները, միայն կադետներն արեցին։ Վիբօրգի կոչը խմբագրել են ահա ովքեր. Դումայի 180 անդամները, որոնցից 105 կադետներ, 55 աշխատաւորներ, 16 սոցիալ-դեմօկրատներ և դեմօկրատական բարենորոգութիւնից՝ 2, իսկ ստորագրել են ընդամենը 225 հոգի։ Ստորագրողներից իրաւաբաններ եղել են 24 հոգի, բժիշկներ՝ 21, գիւղացիներ՝ 19, ուսուցիչներ՝ 18, զեմստվային գործիչներ՝ 17, բանւորներ՝ 13, պրոֆեսսօրներ ու պրիվատ-դոցենտներ՝ 12, խմբագիրներ ու գրողներ՝ 9. եղել են քահանաներ, քաղաքային գործողներ, ագրօնոմներ, դատաւորներ, քննիչներ, պրոկուրօրի օգնական, ինժեներներ, չինօվնիկներ և նախկին նահանգապետ ու ներքին գործերի մինիստրի օգնական։

Միթէ այդ տեղեկութիւնները պերճախօս չեն ձեր անհեթեթութիւնների համար։

Ձեր ասածները միտումնաւոր են։

Եւ բոլորովին իզուր դուք թարգման էք դառնում բուրժուական դասակարգի յոյսերի։ Ինչու էք անհանգստանում եթէ կադետները բուրժուազիայի յոյսերը չարդարացրին։ Չէ՞ որ դուք նրա հետ գործ չունիք և պէտք է արդարացնէք միայն աշխատաւոր, այն էլ բանւոր դասակարգի յոյսերը. արեցէք ուրեմն։ Իսկ բուրժուաները ձեր ծառայութեան կարօտ չեն։ Բայց միթէ միայն բուրժուան, այլև աշխատաւոր դասակարգը կարօտութիւն չը պէտք է զգայ ձեր ույժին։ Իմանալ, որ Պետական Դուման «անել փողոց է» և այնտեղ գնալը վնասակար, բայց և այնպէս հայ ազգաբնակութիւնը առաջնորդել դէպի այնտեղ, այդ դերը գուցէ վայել լինէր ուրիշներին, բայց ոչ ձեզ նման ժողովրդի «սրտացաւ բարեկամներին»։

Այդ բոլորից յետոյ ընտրողական պայքարի մէջ մտնել ժողովրդի վստահութեան քուէն ստանալու համար՝ լօգիկայական հակասութիւն է։ Դաշնակցութեան արդի ղեկավարները պարտաւոր են նախ և առաջ ամոքել այն վէրքերը, ջնջել այն բռնութեան հետքերը, այն արատաւոր երևոյթները, որ նրա աշխատով վերջին երկու տարիներս սերմանել են Կովկասի հայ ժողովրդի սրտում։ Տխուր սերմնացան, որ այսօր վարկաբեկում է Դաշնակցութեան 15 ամեայ գաղափարական հմայքը։

Նախ պէտք է վերադարձնել հիասթափված ժողովրդի հաւատն ու յոյսը, որ տածում էր նա դէպի այդ ազգային կազմակերպութիւնը, և յետոյ միայն սպասել նրանից վստահութեան քուէի։

Դեռ շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ կոչեցիք դուք այդ քուէն, խաղացիք նրա հետ և ի չարը գործադրեցիք։

Աշխատակից

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

(Նամակ խմբագրութեան)

«Մշակ» և «Երկիր» լրագիրները 240 և 27 համարներում վերապահութեամբ արտատպելով Էջմիածնի վերջին դէպքերի մասին լուրեր, իրողութիւնը թողնում են գործի մասնակիցներին։

Ահա իրողութիւնը։

Դեռ սեպտեմբեր ամսին Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը իր կոնդակով պատուիրում է միաբանական ժողով գումարել և վանքի անտեսական վիճակի մասին խորհրդակցել։ Միաբանական ժողովը, իբր մի յանձնաժողովի կատարած քննութիւնից յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ Մայր Աթոռի գործերը աւելի բարեկարգ վիճակի մէջ դնելու համար անհրաժեշտ է, որ նրա բոլոր պաշտօնեաները ընտրվեն իր կողմից և հաստատվեն Նորին Սրբութիւնից։ Այս առաջարկը հաւանութիւն գտաւ Վեհափառ Հայրապետի կողմից, որ իր սրբատառ կոնդակով արտօնեց միաբանութեանը ընտրել իր պաշտօնեաներին և առաջարկել ի հաստատութիւն[1]։ Միաբանական ժողովը նախապէս ստանալով Վեհափառ Հայրապետի հաճութիւնը, ընտրեց և դիւանի խորհրդի համար երեք անդամներ, առանց որոնց խորհրդակցութեան ու գիտութեան ոչ մի գործ չը պիտի առաջարկվէր Վեհափառ Հայրապետին ի տնօրէնութիւն։ Հոկտեմբերի 23-ի երեկոյեան միաբանական ժողովում կարդացվեց Նորին Վեհափառութեան յիշեալ ընտրութիւնը հաստատող կոնդակը, որով Մեսրոպ, Կարապետ և Յուսիկ վարդապետները հաստատվում էին այդ պաշտօնում։ Իսկ հոկտեմբերի 25-ի երեկոյեան վեհարան են հրաւիրվում Մեսրոպ և Կարապետ վարդապետները (Յուսիկ վարդապետը և դիւանապետը Մայր Աթոռից բացակայ էին), որոնց և հաղորդվում է Վեհափառի պատուէրը, որ դիւանի գործերը նախկին և յաջորդ օրվայ պօստը պատրաստեն ու ճանապարհեն։ Այդ պատուէրը կատարելով, Մեսրոպ վարդապետը գործ ունենալու պատճառով մեկնում է, իսկ Կարապետ վարդապետը մնում և շարունակում է ծանօթանալ ընթացիկ գործերի հետ, որի ժամանակ և իմանում է, որ նոյն պօստով ուղարկվելիք ամենակարևոր և իսկապէս խորհրդակցութեան արժանի գրութիւնը, որով սինօդի երեք նոր անդամներ են առաջարկվում, մի օր առաջ (հոկտ. 24-ին) խորհրդի անդամներից ծածուկ շտապել է պօստին յանձնել գրագիր պ. Բարսեղը, նոյն օրը սինօդից ստացած լինելով 14 հոգու ծառայութեան ցուցակները, որոնց միջից ենթադրվում էր թէ նոր պիտի ընտրվէին անդամութեան առաջարկվողները։ Գրագրի տուած բացատրութեան համաձայն այդպէս է պատուիրած եղել նրան դիւանապետ Ն. վ. Մելիք-Թանգեանը, որը մեկնել էր Մայր Աթոռից ամսի 21-ին։

Կարապետ վարդապետը անցքի մասին շտապում է նոյն պահուն յայտնել Վեհափառ Հայրապետին, որ դժուարանում է յիշել, թէ երբ է ստորագրել այդ թուղթը և ինչ է նրա բովանդակութիւնը, պատուիրում է եղելութիւնը պատմել պ. Խորէն Խրիմեանին, որ նա փոքրին յիշեցնէ անցեալը։ Ընդունելով այս Կարապետ վարդապետի առարկութիւնը, թէ այդ դէպքում պէտք է շտապել յետ բերել տալ ծրարը պօստատնից, պատուիրում է կանչել իր մօտ գրագրին։ Իսկ Կարապետ վարդապետը մի նամակով շտապում է հրաւիրել պ. Խորէնին, որ գայ գործի մանրամասնութիւնները պարզէ Նորին Վեհափառութեանը. ապա դիմում է իր պաշտօնակից Մեսրոպ վարդապետին, դէպքի մասին տեղեկութիւն տալիս և առաջարկում է Վեհափառի հաճութեամբ թուղթը գրել պօստատնից և ծրարը յետ ստանալ։ Մեսրոպ վարդապետը, որ առաջարկված անդամներից մէկն է լինում և գիտակ եղելութեան, հրաժարվում է Կարապետ վարդապետի առաջարկութիւնը կատարել, առարկելով, որ անցածից [illegible] իրանք պատասխանատու չեն։

Դրանից յետոյ անցքի մասին Կարապետ վարդապետը պատմեց ինձ և մի քանի ուրիշ միաբանների և մենք միասին գնացինք միաբանութեան աւագագոյն անդամ գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի մօտ և խնդրեցինք, որ նա հաճի յաջորդ օրը առաւօտեան ներկայանալ Նորին Վեհափառութեանը և արտայայտել մեր զարմանքն ու վիշտը կատարված մութ գործի նկատմամբ և խնդրել, որ Վեհափառը հաճի հրամայել ծրարը յետ ստանալ։

Սուքիաս սրբազանը հետեւեալ օրը՝ 25-ի առաւօտեան, վեհարանում նախ տեսնվում է պ. Խորէն Խրիմեանի հետ և ապա հրաւիրւոց ներկայանում Նորին Վեհափառութեանը և յայտնում մեր խնդիրը։ Ինչ էր արգելք անցել մինչ այդ վեհարանում — Սուքիաս սրբազանը գտնում է Վեհափառին այնպիսի տրամադրութեան մէջ, որ բաւականանում է միայն իր խնդիրը յայտնելով և առանց դրական պատասխան ստանալու դուրս է գալիս և մեկնում վեհարանից։ Այդ միջոցին ես, իբրև վանական կառավարութեան անդամ, տնտեսական մի գործով կանչված էի Նորին Վեհափառութեան մօտ։ Երբ ես վեհարանումն էի, Վեհափառի մօտ կանչվեց պ. Խորէն Խրիմեանը, որը դուրս գալով յայտնեց, թէ Վեհափառը պատուիրում է թուղթը յետ ստանալ և կարգադրում է, որ Կարապետ ու Մեսրոպ վարդապետները և գրագիրը գան վեհարան և թուղթը յետ բերելու համար կարգը տնօրինեն։ Կանչվածներից գալիս է միայն Կարապետ վարդապետը և յետոյ գրագիրը, որին ես, պ. Խորէնի առաջարկութեան համաձայն ասում եմ. «Պ. Բարսեղ, Վեհափառը հրամայել է պ. Խորէնին կնիքը հանել, որով Կարապետ վարդապետը թուղթ պիտի կնքէ և ուղարկէ պօստատուն, ծրարը յետ ստանալու համար»։ Պ. Բարսեղը յայտնում է, որ կնիքը տալ չէ կարող, քանի որ դիւանապետը միայն իրան է հաւատացել, ինքը անձամբ կը մատուցէ Վեհափառին։ Վեհափառը բանալին կամեցաւ ինձ կամ պ. Խորէնին տալ, բայց մենք հրաժարվեցինք ընդունելուց և նա հրամայեց հրաւիրել կրկին Սուքիաս սրբազանին վեհարան բանալին ստանալու, իսկ Արտակ վարդապետին ուղարկել պօստատուն ծրարն յետ բերելու։

Սուքիաս սրբազանը իմ, Կարապետ և Արտակ վարդապետների և պ. Վահան Խրիմեանի ներկայութեամբ բանալով սեղանի արկղը, հանեց դիւանի կնիքը։ Պատշաճ թուղթ գրվեց դիւանի կողմից, Կարապետ վարդապետը ստորագրեց այդ թղթին, իբրև դիւանի խորհրդի անդամ, «ի տեղի դիւանապետի», կնքվեց թուղթը և Արտակ վարդապետի ձեռքով ուղարկվեց պօստատուն։ Պօստատան կառավարիչը առարկելով, որ ծրարը Նորին Սրբութեան կողմից է, ուստի լաւ կը լինի որ յետ ստացման թուղթն էլ նրա կողմից լինի՝ այդ իմաստով նոր թուղթ գրվեց հայերէն և ռուսերէն, պ. Վահան Խրիմեանը տարաւ ներս, Վեհափառը ստորագրեց, հայրապետական կնիքով կնքվեց, որից յետոյ գլուխ բանալին յանձնվեց Նորին Վեհափառութեանը, իսկ Արտակ վարդապետը գնաց կրկին պօստատուն, և յետ բերելով ծրարը յանձնեց Սուքիաս սրբազանին, որ անմիջապէս տարաւ մատոյց Նորին Վեհափառութեանը։

Այս է իրողութիւնը, որ ես իբրև մասնակիցներից մէկը, ամենայն ճշտութեամբ արձանագրեցի։ Իսկ բարեմիտ մարդիկ աչքերին՝ օրը ցերեկով, այսքան մարդկանց ներկայութեամբ կատարված մի պարզ դէպք այնպիսի մութ գոյներով նկարագրել, այնպէս անբռնակալելի զրպարտութիւններ յօրինել, չը խնայելով նոյնիսկ ծերունազարդ Հայրապետի անունը, որ առաջ բերին կիրակի օրվայ՝ հոկտեմբերի 29-ի անլուր, անօրինակ ամօթալի խայտառակութիւնը։

Կիւրեղ վարդապետ Կիւրեղեան

Նոյեմբերի 4, ս. Էջմիածին

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոկտեմբերի 28-ից սկսած մինչև 31-ը Մոսկվայում տեղի են ունեցել ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեի նիստերը գաւառական մի քանի խմբակներից եկած պատգամաւորների մասնակցութեամբ։ Նիստերը գլխաւորապէս նվիրված էին արդէն սկսված ընտրողական պայքարի հարցերին։ Նիստին մասնակցող գաւառական պատգամաւորները, յիշատակելով այն ծանր պայմանները, որոնց մէջ դրված է այժմ կուսակցութեան գործունէութիւնը, ադմինիստրատիվ ճնշումների շնորհիւ խափանվում են լրագիրները և այլն, միևնոյն ժամանակ մատնանշում էին և այն հանգամանքը, որ ընտրողների տրամադրութիւնը չէ փոխվել և որ այդ պատճառով ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը լուրջ հիմքեր ունի յուսալու, որ նոր ընտրութիւնների ժամանակ էլ յաղթութիւն կը տանի։

Իբրև հիմնական պատճառներ, ընտրողական պլատֆորմը կազմելու և նախընտրական ագիտացիա մղելու համար, ընդունված են հետևեալ կանոնները.

1) «Ընտրողական պլատֆորմի համար հիմնական նիւթ պէտք է ծառայէ կուսակցութեան ծրագիրը՝ առանձին ուշադրութիւն դարձնելով այն հարցերի վրա, որոնք դրված են արդէն Պետական Դումայի պատասխան-ուղերձի մէջ։ 2) Իբրև միջոց կուսակցութեան բոլոր գլխաւոր նպատակները իրագործելու համար անհրաժեշտ է մատնանշել Պետական Դումայի վստահութիւնը վայելող մինիստրութեան կազմելու վրա։ 3) Այդ նպատակին հասնելու միակ միջոցը պէտք է համարել երկրի միահամուռ աջակցութիւնը Դումային, իսկ այդ աջակցութիւնը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է առաջնակարգ դարձնել Դումայի միջոցով տեղական ինքնավարութիւնների լայն դեմօկրատական սկզբունքներով բարենորոգութիւններ մտցնելը և քաղաքական ազատութիւնների վերաբերեալ օրէնքներ հաստատելը։ 4) Այդ նպատակին հասնելու համար միջոցներից ամենազօրեղը և Պետական Դումայի համար մատչելին պէտք է համարել բիւջէի իրաւունքից օգտվելը. այդ պատճառով էլ ընտրողական ագիտացիայի ժամանակ անհրաժեշտ է առանձնապէս ուշք դարձնել առանց ժողովրդական ներկայացուցչութեան մասնակցութեան կատարված արտաքին և ներքին փոխառութիւնների ապօրէն լինելու վրա։ 5) Շարունակելով պահանջել ընդհան. ընտրողական իրաւունք քառանդամ ֆորմուլայով, անհրաժեշտ է մատնանշել, որ անհատ բաց թողութիւնները ընտրողական օրէնքների մասին իսկապէս արմատական փոփոխութիւն կատարել է նշանակում, որը հիմնական օրէնքների համաձայն արգելվում է, և այդպիսով վերջնականապէս ընդգծում մինիստրութեան գործողութիւնների հակասահմանադրական լինելը Դումայի արձակման համար։ 6) Քաղաքական արմատական բարենորոգութեան հետ միաժամանակ ընտրողական պլատֆորմի համար անհրաժեշտ հիմնական նշանաբանը պէտք է դարձնել հողային հարցի լուծումը՝ կենտրոնացնելով այդ հարցի շուրջը Դումայի գործունէութիւնը և արձակման բացատրութիւնը և անհրաժեշտ համարել նոր Դումայում համախմբված մեծամասնութիւն ստեղծելու և Դումայի վստահութիւնը վայելող մինիստրութիւն կազմելու։ 7) Այդ նպատակով էլ պէտք է բացատրել Դումայի իրաւունքները ընդարձակելու անհրաժեշտութիւնը, այսինքն հիմնական օրէնքների մասնակի վերաքննութիւնը։ 8) Ծրագրի և պատասխան-ուղերձի միւս հիմնական հարցերը, օրինակի համար՝ իրաւունքների հաւասարութիւնը, ինքնավարութիւնը և բանւորական, մնում են այն դրութեան մէջ, որի մէջ գտնվում էին անցեալ ընտրութիւնների ժամանակ»։

Մեծ նշանակութիւն տալով ուրիշ կուսակցութիւնների հետ ընտրութիւնների ժամանակ բլոկ կազմելու հարցին, կենտրոնական կոմիտեն այդ առթիվ ընդունել է հետևեալ բանաձևը.

(1) «Առաջիկայ ընտրութիւնների ժամանակ ընդհանրապէս, և մասնաւորապէս ագիտացիաների ժամանակ, ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը պէտք է պահպանէ իր ինքնուրոյնութիւնը և ամեն միջոցներով պէտք է աշխատէ ընտրել տալ իր թեկնածուներին։ 2) տեղական ընտրողական համաձայնութիւնները թոյլատրելի են այն դէպքերում միայն, երբ նրանցից հրաժարվելը, տեղական պայմանները նայելով, սպառնում է պարտութեան պատճառել օպպօզիցիօն տարրերին ընտրութիւնների ժամանակ. 3) տեղական համաձայնութիւնները անհնարին են այնպիսի կուսակցութիւնների ու խմբակների հետ, որոնք աջակցութիւն են ցոյց տալիս բիւրոկրատական ռեակցիօն ռեժիմին, կամ բացասելով այդ ռեժիմը տեսականապէս, գործնականապէս թոյլ են տալիս, որ հնարաւոր է նրանց հետ ժամանակաւոր համաձայնութիւն կայացնել»։ («Р. В.»)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Բարձրագոյն դպրոցը Կովկասում մի հասունացած պահանջ է տասն միլիոն ազգաբնակութիւն ունեցող ծայրերկրի համար։ Ո՛չ մի անգամ է առաջարկ եղել այս խնդիրը իր ամբողջ անհրաժեշտութեամբ, բայց կառավարութիւնը տարիների ընթացքում անհնարին է գտել գոհացնել հասարակութեան միջնորդութիւնը, խուսափելով Կովկասում ևս անկարգութիւնների և քաղաքական ագիտացիայի բոյն ստեղծելուց։ Այժմ, երբ հասարակական-պետական կեանքը բոլորովին այլ պատկեր է ստացել, կառավարութիւնն ինքն զգում է Կովկասում բարձրագոյն կրթարանի նշանակութիւնը և համակրութեամբ է վերաբերվում խնդրի իրագործման ուղղութեամբ աշխատող հասարակական մարմիններին։

Բացի փոխարքայի դիւանատան կից կազմված կոմիտեից, որտեղ հասարակութեան և տեղային վարչութեան ներկայացուցիչները զբաղված են բարձրագոյն դպրոցի հարցը քննելով, Պետերբուրգում ևս կազմված է մի մասնաւոր, բայց ձեռնհաս խորհուրդ, գիտութեան ներկայացուցիչներից և կովկասագէտներից, մայրաքաղաքում բնակվող կովկասցիների ձեռնարկութեամբ, բարձր. դպրոցի ամենայարմար և կարևոր տիպը որոշելու համար։

Որպէս գիտութեան մարդիկ, ընդունակ որոշելու ժամանակակից կեանքի պահանջներին և ուսանող սերունդի ձգտումներին աւելի համապատասխան դպրոցի տիպը, և մանաւանդ իբրև անձինք, տեղեակ Կովկասի հասարակական-տնտեսական կացութեան, խորհրդի անդամները իրանց հեղինակաւոր կարծիքներով կարող են անփոխարինելի ծառայութիւն մատուցանել մեզ, կովկասցիներիս, ապագայ կովկասեան alma mater-ի վիճակը տնօրինելու խնդրում։

Մասնաժողովը ունեցաւ երկու նիստ, որ պարզվեց գերիշխող հոսանք յօգուտ բարձրագոյն դպրոցի մի բարեփոխված տիպի, որտեղ պէտք է զուգակցվեն համալսարանական և տեխնիքական գիտութիւնները։

Մենք առիթ կունենանք «Մշակի» յաջորդ համարներում ծանօթացնել ընթերցողներին այդ նիստերում արտայայտված և ապագայում արտայայտվելի բոլոր կարծիքներին ու որոշումներին. այս ներկայ երկտողով հաղորդում ենք մի տպաւորութիւն, որպէս արտայայտիչ գիտնական աշխարհի տրամադրութեան ասպարէզ եկած խնդրի առթիվ։

Կովկասում բացվող բարձրագոյն դպրոցի ենթադրեալ տիպը նման չէ ոչ անգլիական, ոչ գերմանական և ոչ ֆրանսիական բարձրագոյն դպրոցներին։ Այս դպրոցը պիտի միացնէ մասնագիտական տեխնիքական կրթութիւնը զուտ գիտութեան հետ. նա պէտք է ստեղծէ փոխադարձ ներգործութիւն, ձուլման պրօցէսս տարբեր գիտութիւնների մէջ։ Կովկասը հաւասար չափով կարօտ է թէ համալսարանի, այսինքն հանրակրթական հիմնարկութեան, և թէ տեխնիքական դպրոցի բարձրագոյն արուեստների ճեմարանի։ Դժուար է չըշտել, որն է աւելի կարևոր և գերադասելի։ Թողնել խնդիրը երկրի արդիւնաբերութեան պայմանների տեսակէտից, կը նշանակէ բանալ պօլիտեխնիկում, սկզբից ուսանողութեան ձգտումներն ու կոչումը մասնագիտութեան նեղ հորիզոնում և ենթարկել գիտութիւնը, որ պէտք է միշտ գաղափարական կոչում ունենայ, զանազան գործնական միտումների։ Սակայն՝ վերջին տարիներս լայն մասսաներում նկատելի է արտասովոր հետաքրքրութիւն դէպի հասարակական, տնտեսական և քաղաքական գիտութիւնները։ Այս նշանակում է, որ կրթված, զարգացած քաղաքացիներ ունենալու տենչը աւելի սաստիկ է, քան բարձրագոյն կրթութիւն ստացած տեխնիկների, որոնք պէտք է շարժեն միմիայն տեղական արդիւնաբերութիւնը ու տեխնիկան։ Այս նշանակում է, Կովկասը կարօտ է այնպիսի մարդկանց, որոնք առաջ պէտք է մղեն ազգաբնակութիւնը ժամանակակից կեանքը առաջնորդող նորագոյն լուսամիտ պրօբլեմներով։ Վերոյիշեալ գիտութիւնները, որոնցով տարված է Կովկասը, կազմում են համալսարանի ծրագիրը. բնական է ուրեմն, որ համալսարանի կարևորութիւնն աւելի զգալի պէտք է թւայ։

Հեռու չէ այն ժամը, երբ խոչընդոտները կը փշրվեն և Կովկասը կունենայ և համալսարաններ, և պօլիտեխնիկումներ, և ուրիշ բարձրագոյն կրթարաններ։ Իսկ այժմ, ի նկատի առնելով այն համեստ կարծիքը, որ տիրում է երկրի եկամտաբերութեան շրջանակները տնօրինող հաստատութիւններում ժողովրդական լուսաւորութեան նշանակութեան մասին և այն սահմանափակ միջոցները, որ դպրոցի խնդիրը մշակող մասնաժողովը ունի իր տրամադրութեան ներքոյ, ստիպված ենք հաշտվելու այն մտքի հետ, որ պէտք է առանց յետաձգելու սկսել իրագործել ամենահնարաւորը և ապա շարունակել բնական զարգացման օրէնքներով։ Առանձին մի համալսարան և մի պօլիտեխնիկում անհնարին է բանալ ներկայումս։ Շատերը ժողովականներից առաջարկում են բանալ պօլիտեխնիկում, հաստատելով, որ համալսարանն այլ ևս չէ բաւարարեցնում ժամանակակից պահանջներին, մինչդեռ տեխնիկան այնպէս կատարելագործվել է և ժամանակակից արդիւնաբերութիւնն այն աստիճան զարգացել է, որ երիտասարդութեան մեծամասնութիւնը մտնում է տեխնիքական դպրոցներ։ Գերադասելով պօլիտեխնիկումը, դրանք առաջարկում են ապագայ դպրոցի դասընթացքը ծրագրել տեղական արդիւնաբերական պահանջների համեմատ. օրինակ, բանալ լեռնային-գործարանական կամ մետալուրգիական բաժին։ Պետերբուրգի պօլիտեխնիկումը, որտեղ գիտական-տեսական դասաւանդութիւնը և նրա գործադրութիւնը լուրջ հողի վրա են դրված և արգասալից հետևանքներ են տալիս, ընդունվում է որպէս ցանկալի օրինակ։

Սակայն՝ ի նկատի ունենալով, որ մասնագիտական կրթութիւնը ծառայելով Կովկասի միմիայն արդիւնաբերական շահերին՝ հազիւ թէ ընդունակ լինի բարգաւաճ կացութիւն ստեղծելու տասը միլլիօն բազմալեզու, բազմակենցաղ ժողովրդի մէջ, մեծամասնութիւնը առաջարկում է միացնել մի դպրոցում զանազան բաժիններ, Բուդապեշտի համալսարանի օրինակով, որտեղ աւանդվում են և տեխնիքական և համալսարանական առարկաներ։ Եւ որովհետև Կովկասը աւելի է յափշտակված — ընդհանուր կարծիքով — հանրակրթական գաղափարներով, պէտք է լուսաւորութեան միասին սկսել համալսարանական բաժնից, իրաւաբանական դասընթացքով, լրացված տնտեսական, հասարակական և պետական գիտութիւններով։ Իսկ մասնագիտական առարկաների ծրագիրը միաժամանակ կարելի է սահմանափակել բնագիտական բաժնով, երկրի ուսումնասիրման զարկ տալու համար, իսկ յետոյ, եկամուտի աղբիւրների համեմատ, նա կարող է ճիւղաւորվել ենթաբաժինների՝ լեռնային, էլէքտրօ-տեխնիքական, քիմիական և այլն և այլն։ Բժշկական ֆակուլտետը — մեծամասնութիւնը անժամանակ է գտնում, շնորհիւ այն հանգամանքի, որ մի այդպիսի լայն մասնագիտական բաժին խոշոր միջոցներ է պահանջում (մօտ 400,000 ր. տար.), որոնցից զուրկ է կոմիտեն։ Հասարակական գիտութիւնների բաժինը պետական, հասարակական և տնտեսական գիտութիւններով չը պէտք է լրիւ համարվի։ Կովկասը լայնատարած երկիր է, կուլտուրան, լեզուները, գրականութիւնը անյայտութեամբ ծածկված, ամեն ինչ հետազօտութիւն, ուսումնասիրութիւն է պահանջում։ Այս տեսակէտից պատմական լեզուաբանական ֆակուլտետը, ազգագրական բաժնով համերձ, առաջնակարգ նշանակութիւն պէտք է ունենայ ապագայ դպրոցում, պարգևելով Կովկասին ուսեալ կովկասագէտներ և լայն ասպարէզ ձեռնաբացելով գիտական-հետազօտական աշխարհում. մանաւանդ ցանկալի է մտցնել մահմեդական իրաւունք և իրաւունքի համեմատական պատմութիւն. այս երկու կաթեդրայի համար Կովկասը շատ հետաքրքրական և բերրի հող է ներկայացնում իր կուլտուրայի վերջին հետքերով։

Պարզ է, որ տեխնիքական մի որևէ մասնագիտական ճիւղ, լինի այդ նոյնիսկ գիւղատնտեսական, որ շատ կարևոր է Կովկասին նախ այն հիման վրա, որ կը ստեղծվի շփումն ինտելլիգենցիայի և գիւղական դասակարգի մէջ և ապա Կովկասը կունենայ պատրաստված հասարակական գործիչներ գիւղատնտեսութեան ասպարէզում, մեր ժամանակակից պատմական մոմենտի անյետաձգելի պահանջներից մէկն է՝ ուսումնասիրումն գիւղական և զեմստվային տնտեսութիւնների և բարելաւումն գիւղական հողագործային կուլտուրայի. բացի այդ՝ երկիրը աւելի ինտենսիվ եղանակով շահագործել և արդիւնաւորել կարող են տեղային դպրոցը աւարտած, տեղում գործնականապէս ուսումնասիրած գիւղատնտեսները, քան թէ արտասահմանում կամ Ռուսաստանում տեսական գաղափար ստացած ուսեալ ագրօնօմները *)։ Եւ մի շարք համալսարանական գիտութիւնների ֆակուլտետներ միացած՝ կարող են կովկասեան բարձրագոյն դպրոցի հիմքը դնել, իսկ յետոյ ճիւղաւորվելով և աստիճանաբար միացնելով համալսարանական և տեխնիքական նորանոր բաժիններ, կը վերածեն նրան (ր. գ.) այն բարեփոխված նորագոյն ընդհանուր տիպի, որ գոյութիւն ունի գլխաւորապէս Ամերիկայում, Բուդապեշտում և Ստրասբուրգում։

Այս համառօտ խորհրդածութիւնից յետոյ, որ արտայայտում է, ինչպէս սկզբում ասացինք, պրօֆեսսօրների և կովկասագէտների կարծիքների ընդհանուր եզրակացութիւնը Կովկասի բարձրագոյն դպրոցի վերաբերեալ, կաշխատենք կանգ առնել առաւել հեղինակաւոր մտքերի վրա։ Իսկ այժմ երկու բառով ամփոփենք յօդուածը։

Ուրեմն, ի նկատի առնելով, որ Կովկասը զգում է համալսարանի և պօլիտեխնիկումի անհրաժեշտութիւնը, մասնաժողովը հակված է գերադասել համալսարանը, լրացրած հասարակական, տնտեսական և քաղաքական գիտութիւններով։ Բացի այդ, ընդունելով, որ տեխնիկան ու արդիւնաբերութիւնը զարգացնելու համար անհրաժեշտ են և մասնագիտական բաժիններ, որ պիտի սերտ կապված լինեն զուտ գիտութեան հետ, մասնաժողովը յարգում է համալսարանում տեխնիկա մտցնելու առաջարկը, սկսելով նրա ամենագործնական և տեղական պայմաններին առաւել համապատասխան ճիւղերից։

Ի նկատի առնելով եւրօպական մի քանի բարեփոխված բարձրագոյն դպրոցներ, որտեղ մի հիմնարկութեան մէջ հիւսված են համալսարանն ու մասնագիտական ճեմարանը, որտեղ ուսանողը միաժամանակ ստանում է հանրակրթական գիտութիւնների որոշ պաշար և բարձրագոյն արուեստ, այսպիսով պատրաստելով իրան և գործնական և հասարակական ասպարէզների, միացնելով իր զարգացման հորիզոնում գիտութիւն և տեխնիկա, իսկ իր անձնաւորութեան մէջ կրթված, ինքնուրոյն գործունէութեան ընդունակ քաղաքացի և ուսեալ արհեստաւոր, մասնաժողովի մեծամասնութիւնը վճռում է կանգ առնել մի այսպիսի տիպի վրա և քաջայոյս է, որ նա կը ներդաշնակէ ազգաբնակութեան սոցիալական բնազդն արտայայտող բոլոր երևէջներին արձագանք և գործնական կեանքի պահանջների որոշ գոհացում։ Իսկ ոչ հեռաւոր ապագայում բնական էվօլիւցիան կը շտապէ կատարելագործել կովկասեան առաջին բարձրագոյն կրթարանին հաղորդած ուղղութիւնը, վայրենի ճանաչված երկրում եւրօպական քաղաքակրթութեան լուսամիտ գաղափարներ տարածելով՝ դարաւոր ճնշման, քայքայման և խաւարի ցանկերում խարխափող տասը միլիօնաւոր ազգաբնակութեան մէջ։

Ուս. Յ. Ղուկասեան

Ս. Պետերբուրգ, 25 հոկտ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—«Нов. Путь» լրագիրը հաղորդում է, որ Պետական Դումայի նախընտրական պայքարի առաջին քայլերը արդէն նշմարվում են ի նպաստ պրօգրեսսիվ տարրերի։ Մօտ օրերս այնտեղի քաղաքային դումայում տեղի է ունեցել քաղաքային 8 ընտրողական մասնաժողովի անդամների ընտրութիւնը։ Զաչնաւորների մի խմբակ եռանդուն կերպով ագիտացիա է անելիս եղել աջակողմեաններից անդամներ ընտրելու, բայց լիակատար պարտութիւն է կրել. ընտրվել են բացառապէս ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամներից, որոնց մեծամասնութիւնը առաջի ընտրութիւնների ժամանակ էլ մասնաժողովի անդամ է եղել։ Նրանցից յետոյ ընտրվել են աննշան թիւով «հոկտեմբերեաններ» ևս։ Իսկ աջակողմեաններից չէ անցել և ոչ մէկը։

—Մօտ օրերս Պետերբուրգից ճանապարհվել են ներքին գործերի մինիստրութեան հրամանով յատուկ պաշտօնեաներ, որոնց յանձնարարված է Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ կազմակերպելու մամուլի միջոցով ագիտացիաներ Խերսոնում, Եկատերինօսլավում, Եկատերինոդարում, Խարկովում, Սարատովում և Մինսկում։ Այդ պաշտօնեաները ստացել են յատուկ հրահանգներ և իւրաքանչիւր քաղաքի համար որոշ գումարներ։ Մինչև իսկ մինիստրութիւնը որոշել է թէ ինչ պէտք է լինի լրագիրների անունները։ Օրինակ Եկատերինօսլավում հրատարակվելիք լրագրի անունը պէտք է լինի «Դումայում»։ («Нов. Путь»)

—Մօտ ժամանակներս Պետերբուրգում կայացել է սոցիալ-դեմօկրատների կուսակցութեան մեծամասնական ֆրակցիային պատկանող բանւորական աշխատաւորների քաղաքային ընդհանուր կօնֆերենցիան։ Կօնֆերենցիայի քննութեան նիւթը եղել է օպպօզիցիօն կուսակցութիւնների հետ բլոկ կազմելու և համաձայնութիւն կայացնելու հարցը։ Այդ առթիվ առաջարկվել է երկու բանաձև. առաջին, որ սոցիալ-դեմօկրատիան պէտք է մասնակցէ նախընտրողական պայքարին իբրև մի բոլորովին ինքնուրոյն պրօլետարական կուսակցութիւն, նա հնարաւոր է համարում ընտրութիւնների թէ առաջին և թէ վերջին աստիճաններում բլոկ կազմել այն բոլոր կուսակցութիւնների ու խմբակների հետ, որոնք պահանջների մինիմում ընդունում են սահմանադիր ժողովը, իսկ նրան հասնելու ճանապարհը՝ զինված ապստամբութիւնը, և մասնաւոր տեխնիքական համաձայնութիւններ, այսինքն ընդհանուր լիազօրական անուանացուցակներ դնել այնտեղ, որտեղ սեպհական թեկնածուներ ընտրել տալու շանսերը շատ քիչ են և համաձայնութիւն կայացնել լիազօրների որոշ խմբակցութեան ժամանակ պատգամաւորական տեղերը հաւասարապէս բաժանելու համար։ Իսկ երկրորդ բանաձևը առաջարկում էր. բուրժուազիական որևէ կուսակցութեան հետ ոչ մի բլոկ և համաձայնութիւն չը կայացնել, և ամեն տեղ, ուր որ հնարաւոր լինի դնել սեպհական թեկնածուներին և ջանք գործ դնել ընտրել տալու։ Երկրորդ և յաջորդ աստիճաններում թոյլատրվում է մասնաւոր տեխնիքական համաձայնութիւններ կայացնել բոլոր օպպօզիցիօն կուսակցութիւնների հետ, որոնց թւում և կադետների հետ։

Երկարատև վիճաբանութիւններից յետոյ՝ կօնֆերենցիան ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունել է երկրորդ բանաձևը։ («Нов. Путь»)

---

[1] Դեռ 1904 թվին Վեհափառ Հայրապետը կոնդակով պատուիրել էր միաբանական ժողով գումարել և պաշտօնեաների ընտրութիւն կատարել, բայց ժողովքներն անցել էին անհետեւանք։

*) Այդ խնդրին մենք կը վերադառնանք մի առանձին յօդուածով։

ՊԼԵԽԱՆՈՎԻ ՆԱՄԱԿԸ

«Товарищъ» լրագրի մէջ տպագրված է Գ. Վ. Պլեխանովի հետեւեալ նամակը ուղղված բանուորներին.

«Բաց նամակ գիտակից բանուորներին։ Ընկերնե՛ր, մօտենում են երկրորդ Դումայի ընտրութիւնները՝ այդ ընտրութիւնների հետեւանքից գլխաւորապէս կախված կը լինի Ռուսաստանի քաղաքական ազատութեան գործը։ Եթէ կառավարութեանը աջողվելու լինի նոր Դումա ուղարկել իր մարդկերանց մեծ մասը կամ գոնէ այնպիսիներին, որոնք պատրաստ են հաշտութիւն կայացնելու նրա հետ աննշան զիջումներով, այն ժամանակ շատ շատերը կասեն, որ նա իրաւացի էր առաջին Դումայի հետ կռիւ մղելու գործում։ Այն ժամանակ շատերը հաւատ կընծայեն այդ հէքիաթին, թէ ռուս ժողովուրդը քաղաքական ազատութիւն չէ ցանկանում, և դրանով էլ կառավարութիւնը կը ստանայ մի նոր, անհամեմատ աւելի հզօր միջոց կռիւ մղելու մեր ազատագրական շարժման դէմ։ Նա այդ լաւ է իմանում և այդ պատճառով լարում է իր բոլոր ոյժերը մաքառելու ընտրութիւնների ժամանակ։

Եւ հարկաւոր է ի նկատի առնել, որ նրան պատրաստ են աջակցելու այժմ ազգաբնակութեան այնպիսի խաւերը, որոնք դեռ ևս քիչ ժամանակ առաջ լիակատար անվստահութեամբ էին վերաբերվում նրան։ Այդ խաւերն են. խոշոր բուրժուազիան, որ սարսափահար եղաւ պրոլետարիատի չափազանցացրած պահանջներից, և փոքր ի շատէ խոշոր հողատէրերը, որոնք սարսափահար եղան գիւղացիական ագրարական շարժումից։ Այդ կողմից քաղաքական ազատութեան գործը աւելի վատ պայմանների մէջ է գտնվում, քան թէ սրանից մի քանի տարի առաջ։ Իրաւ է, միւս կողմից անկասկած է և այն, որ կառավարութեան ռէակցիոն քաղաքականութիւնը աւելի ու աւելի է այժմ բաց անում ժողովրդական մասսայի նոյն իսկ ամենայետամնաց խաւերի աչքերը։ Բայց ժողովուրդը կազմակերպված չէ, մինչդեռ կառավարութիւնը կազմակերպված է, այդ պատճառով կառավարութեան դրութիւնը աւելի է նպաստաւոր, քան թէ ժողովրդինը։ Կազմակերպված հակառակորդի հետ կռիւ մղել առանց կազմակերպվելու անկարելի է։ Այդ պատճառով մեր ոյժերը կազմակերպելը մեր ամենաառաջին նպատակը պէտք է լինի, բայց դա դեռ քիչ է,—պատերազմի ժամանակ հարկաւոր է մանեօվրներ անել։ Պէտք է մեր ոյժերը այնպէս դասաւորել, որ նրանք հնար ունենան հակառակորդին որքան կարելի է մեծ կորուստ պատճառել, բայց որպէսզի մենք կարողանանք հասնել այդ նպատակին, պէտք է միշտ յիշենք, որ բացի մեր կուսակցութիւնից, պրոլետարիատի կուսակցութիւնից, Ռուսաստանում կան ուրիշ կուսակցութիւններ ևս, որոնք պատրաստ են կռուելու քաղաքական ազատութեան համար։ Այդ կուսակցութիւնները թէև այնքան շատ առաջ չեն գնում, ինչպէս պրոլետարիատի կուսակցութիւնները, այնուամենայնիւ նրանք գնում են առաջ, և այնքան, որքան որ նրանք գնում են առաջ, նոյնքան էլ մենք պէտք է աջակցենք նրանց մեր սեփական շահերի համար։ Օգնելով նրանց, մենք աւելացնում ենք մեր սեփական ոյժերի զօրեղութիւնը։ Այդ հարկաւոր է յիշել միշտ և ամենայն տեղ, իսկ մանաւանդ հարկաւոր է յիշել այդ բանը նոր Դումայի ընտրութիւնների ժամանակ։ Եթէ մենք վերաբերվելու լինենք բոլոր ոչ պրոլետարական կուսակցութիւններին իբրև այնպիսի կուսակցութիւնների, որոնց յաղթանակը հաւասարապէս վնասակար է պրոլետարիատի համար, այն ժամանակ տաքտիկական աններելի սխալ գործած կը լինենք, մենք նպաստած կը լինենք այդպիսով այնպիսիների պարտութեանը՝ որոնք կարող էին մեզ աջակցել, և այնպիսիների յաղթութեանը, որոնցից մենք ուղղակի ոչինչ սպասելիք չունենք, բացի խարազանից ու փայտից։ Այդպէս վարվել նշանակում է մատնել մեզ, դաւաճանել մեր սեփական գործին։ Ընտրութիւնների ժամանակ մենք պէտք է գործենք մեծ զգուշութեամբ։ Այնտեղ, ուր անկասկած է, որ մենք անց կը կացնենք մեր թեկնածուներին, մենք կարող ենք և պէտք է գործենք միւս կուսակցութիւններից անկախ կերպով, իսկ այնտեղ, ուր մենք չենք կարող հաւատացած լինել, որ մեր թեկնածուն կը յաղթանակէ, մենք պարտաւոր ենք համաձայնութիւն կայացնել միւս կուսակցութիւնների հետ, որոնք ցանկանում են կռիւ մղել մեր հին կարգի դէմ։ Եթէ մենք այդպիսի համաձայնութիւն չը կայացնենք, ապա կունենայ ամենավնասակար խառնաշփոթութիւնը դիցուք թէ՝ սխալուելու լինի մի կարգին ընտրութիւնների ժամանակ, իսկ ընտրվելու՝ հոկտեմբրիստներից մէկը կամ նոյն իսկ սև-հարիւրակայինը. կառավարութեան ուզածն էլ հէնց այդ է, նա բոլոր սրտով կուրախանայ մեր արած այդ սխալի համար, և մենք ոչ միայն կը վնասենք մեր գործին, այլ և ամօթով ու նախատինքով կը ծածկենք մեզ Ռուսաստանի և արտասահմանի բոլոր գիտակից ու ազնիւ մարդկանց աչքում։ Ընկերնե՛ր, մօտենում է կարևոր և վճռական րոպէն։ Մեր տաքտիկայից կը լինի կախված կառավարութեան պարտութիւնը կամ յաղթանակը։ Աշխատենք ուրեմն այդ տաքտիկան դարձնել աւելի խելացի, իսկ քաղաքական խելացիութիւնը պահանջում է մեզնից այն, որ մենք հաճոյքով համաձայնութիւն կայացնենք ոչ պրոլետարական կուսակցութիւնների հետ բոլոր այն դէպքերում, երբ այդ անհրաժեշտ է ռէակցիայի դէմ յաղթանակելու համար։ Մենք իրաւունք չունենք ուրիշ կերպ վերաբերվելու։ Ով որ յանուն սխալ ըմբռնած անհաշտութեան չի ցանկանայ յիշեալ դէպքերում համաձայնութիւն կայացնել օպոզիցիոն ոչ պրոլետարական կուսակցութիւնների հետ, նա դրանով իրապէս կաջակցի կառավարութեանը, այսինքն կը վարվի այնպէս, ինչպէս որ վարվում են ազատութեան թշնամիները։ Ես իմ քաղաքացիական պարտականութիւնն եմ համարում ասել ձեզ այդ բոլորը՝ մօտալուտ ընտրութիւնները աչքի առաջ ունենալով»։

ԱՆԻԾԵԱԼ ՀԱՐՑԸ

(Կոմս Իվան Տոլստոյի)

Որքա՜ն հարցեր են յարուցված վերջին ժամանակներս, հարցեր, որոնց մեր հայրենակիցներից մէկը կամ միւսը համարձակ վերնագիր կը դնէր այն անունը, որ գործ եմ ածում ես այս յօդուածի սկզբում. սակայն կարծում եմ, որ ի նկատի ունենալով իրանց քաղաքական և սօցիալական համոզմունքները, համարեա բոլորը կը տարբերվէին այն կարծիքներում, թէ սրանցից ո՞րը պէտք է իսկական անիծեալ համարել և ո՞րը այդ կոչման անհամապատասխան։ Բայց կայ մի հարց, ո՛րը, թէև տարբեր հայեցակէտերով—բոլորը համաձայնեն «անիծեալ» անուանել. հարկաւոր է, արդեօք, յիշեցնել ընթերցողին, որ այդ, բոլորի համար անիծեալ հարցը հրէական հարցն է, հրէական իրաւազրկութեան հարցը, այն հարցը, թէ արդեօք, հարկաւո՞ր է և երբ—հաւասարեցնել հրէաների իրաւունքները Ռուսաստանի միացած ազգաբնակութեան իրաւունքների հետ։

Հէնց իրանց հրէաների և հրէաներին մարդ համարող ոչ-հրէաների համար, որոնք բնական են գտնում որ հրէաները օգտվեն մարդկային բոլոր իրաւունքներով, յիշեալ հարցը անիծեալ է երևում մինչև այն ժամանակ, մինչ նա հարց է, այսինքն մինչև այն ժամանակ, երբ նա իրաւունք կը տայ հրէաներին վայելել այն բոլոր իրաւունքները, որպիսին վայելում և վայելելու ենք մենք բոլորս, նրանց քրիստոնեայ հայրենակիցներս։ Երբ դա կատարվի, այն ժամանակ ինքը հարցը կամ կը դադարէ բոլորովին գոյութիւն ունենալ, կամ երկրորդական, մասնաւոր հարց կը դառնայ։

Հակասեմիտականների համար այդ հարցը անիծեալ պէտք է կոչվի այն պատճառով, որ նրանք, եթէ ցանկանում են անկեղծ լինել, պէտք է ընդունեն, որ դեռ չեն գտել նրա լուծումը, առաջարկելով կամ պահպանել գոյութիւն ունեցող սահմանափակումները, կամ նոյն ընկած պատրաստ են նոյնիսկ առաջարկել հրէաների համատարած, գլխովին կոտորած, համատարած հալածանք, ուրիշ խօսքերով ասած, նրանք առաջարկում են, թէև հանդքով, հրէշաւոր միջոցներ, որ սաղմնաւորվում է խելագարների գլխում, միջոցներ, որոնց իրականացումը, ընդհանրապէս, բացարձակ և միանգամայն անիրագործելի է։

Ես հրեայ չեմ, իմ ցեղում ոչ մի հրեայ չը կայ, ոչ մի բանով նրանց պարտական չեմ և մտադրութիւն էլ չունեմ նրանց առաջ պարտական մնալ. հետևաբար, կարծում եմ որ այդ հարցի մասին կարող եմ խօսել անկողմնակալ կերպով։ Եթէ հրեայից կամ հրէաներից վնասված որևէ մէկը ինձ ասէ, որ ես իմ վրա չեմ փորձել հրէութեան բացասական յատկութիւնները, այդ դէպքում ես կարող եմ միայն տարակել, որ այդ հանգամանքն ես աւելի լաւ է երաշխաւորում իմ անկողմնակալութիւնը, քան հրէութեան «դրսի» բացասական փորձը, որը անկողմնակալ, ի հարկէ, համարվել չէ կարող։

Եւ ահա ես, ինչպէս ազնիւ մարդ, վկայում եմ որ մէկիկ-մէկիկ թւելով իմ յիշողութեանս մէջ այն տասնեակ հրէաներին, որոնց հետ ես անձամբ ծանօթ եմ եղել, այն հազարաւոր հրէաներին, որոնց ես տեսել եմ մօտաւորապէս կէս դար անցրած իմ կեանքում, ես, ձեռքս խղճմտանքիս վրա դրած անկարող եմ ասել, որ նրանք ուրիշ մարդկանցից վատ են։ Ես համոզված եմ, որ հրէաների մէջ պատահում են սրիկաներ, բայց և համոզված եմ, որ քրիստոնեաների մէջ էլ լինում են սրիկաներ. ինչպէս առաջինների, այնպէս և վերջինների մէջ պատահում են գողեր, մարդասպաններ, աւազակներ. բայց հազիւ թէ մէկը վճռէ—չը վախենալով իր խղճի յանդիմանութիւնից—պնդել, թէ այս ցեղը միւսից առաւելութիւն ունի այդ տեսակէտից։ Իբրև ռուս, ես կը կամենայի հաւատալ, որ մեր ցեղը բոլոր ցեղերից լաւն է, պատրաստ եմ նոյնիսկ դրան հաւատալ, հաւատում եմ, բայց ապացուցել այդ չեմ կարող, և ուրեմն պարտաւոր եմ բոլոր մարդկանց մարդիկ համարել—մարդկային բոլոր թուլութիւններով, բայց և նրանց բոլոր արժանաւորութիւններով։

Ինչպէս մարդ, ես ինձ իրաւունք չեմ համարում այլ կերպ մտածել, և ես հարցնում եմ, իրաւունք ունի՞ արդեօք ուրիշ հայեցակէտի վրա կանգնել մարդկանց այն կազմակերպված համախմբումը, որ պետութիւն է կոչվում։ Եթէ վրէժի ծարաւը, զայրոյթը, ատելը կարող են մեզ թեթևացուցիչ հանգամանքներ հանդիսանալ առանձին անհատների համար, սրանց՝ մարդկային էթիկայի սկզբունքներից խուսափելու դէպքում, ուրեմն և այն պետութիւնը, որ չէ ճանաչում էթիկայի սկզբունքները, ոչ մի այդօրինակ ներողութեան արժանի չէ։ Ուստի, իմ տեսքում—որևէ թուրքի, մորդվինի կամ հրեայի ձեռքով քաշքշված կամ խաբված ռուսը, բարոյական իրաւունք չունենալով հանդերձ՝ կարող է արհամարհել և ատել բոլոր թուրքերին, մորդվիններին կամ հրէաներին, բայց պետութիւնը չը պէտք է առաջնորդվէ իր վճիռների այդպիսինակ մօտիւներ.—Նա ոչ թէ իրաւունք չունի, այլ և չէ կարող խտրութիւն դնել իր քաղաքացիների միջև, ղեկավարվելով նրանց ծագմամբ կամ դաւանութեամբ։ Եւ եթէ ինչպէս կառավարչական, այնպէս և ժողովրդական Ռուսաստանը անհրաժեշտ և արդար համարեց սահմանել երկու մեծ սկզբունքներ—բոլոր դաւանութիւնների և դաւանութեան համահաւասարութիւն, ուստի և ոչ մի հնարաւորութիւն չը կայ չը մտցնելու ծագող նոր կազմի մէջ եբրայեցիներին, նրանց մի մասը դնելով կէս-մարդկանց շարքում։ Թող մեզ մօտ մնան այնպիսի անձինք, որոնք միմեանց հետ կը պայմանաւորվեն ոչ մի բան չը գնել հրէաների կրպակներից, չը բժշկվել հրեայ բժիշկների մօտ, ինչպէս կը լինեն այնպիսի մարդիկ, որոնք կը ցանկանան ոչ մի կապ չունենալ գերմանացիների, հայերի հետ, և այլն, բայց թող դա մնացորդ մնայ հին մոլորապաշտութիւնների, ազգութեան—մի կողմից, և շովինիզմի՝ միւս կողմից։ Սակայն պետութիւնը չը պէտք է և չէ կարող ոչ ղեկավարիչ, ոչ ծառայակցական դեր խաղալ այդ յատակցութեան արժանի և անկուլտուրական կռւում։

Ինձ թւում է, կամ աւելի ճիշդ, ես համոզված եմ, որ հրէական հարցի լուծումը պետութեան և ռուս ժողովրդի ձեռքով հանդիսանում է Ռուսաստանի վճռականութեան՝ Ասիայից Եւրոպա անցնելու փորձնական քարը. և ես չեմ հաւատում և ոչ մի «ազատութեան» իրականացման—առանց նախօրօք ճանաչելու համամարդկային իրաւունքներ բոլոր համահայրենակիցների համար—ինչ ցեղի էլ որ նրանք պատկանելիս լինեն և ինչ կրօն էլ որ նրանք դաւանեն։ Ես կարծում եմ և գիտեմ, որ կարելի է յայտարարել խօսքի ազատութիւն, և իսկոյն կատարելագործել և բազմապատկել գրաքննիչ կանոնները, կարելի է յայտարարել անձի ազատութիւն, և իսկոյն մտցնել զինւորական դրութիւն. և որոշեալ դէպքերում նոյնիսկ ամենալիբերալ կամ աւելի ծայրայեղ համոզմունքների տէր րէալ քաղաքագէտը կարդարացնէ այդ միջոցները, ի նկատի ունենալով այս կամ այն ենթադրութիւնները կամ փաստերը։ Կարելի է հաւանել մահվան պատժի վերացումը, սակայն նա կրկին կը գործադրվի։ Բայց եթէ մէկ անգամ արդէն օրէնքի առաջ բոլոր դասերի և բոլոր ազգերի համահաւասարութիւնը կը ճանաչվի, այդ սկզբունքը հիմնական և անփոփոխ կը դառնայ—մինչև որևէ պետական առանձին ընդհանուր հոսանքի տիրապետութիւնը։ Դեռ քիչ է այդ. այդպիսի ձևականօրէն կանոնաւոր և անհերքելի տրամաբանական սկզբունք սահմանելը անմիջապէս կարտադրէ իրանից յետոյ իր հայրենիքը սիրող իւրաքանչիւր հակի համար ցանկալի գործնական հետևանքներ, այսպէս օրինակ.—ոչնչացնումը անցաթղթային սիստեմի բոլորի համար, այսինքն ռուս մարդու համար ամենաճնշիչ և ստոր յատկանիշներից մէկը, որը ոչ միայն անպատւաբեր, այլ և վնասակար է նոյն իսկ հէնց պետութեան համար. մեր ադմինիստրացիայի իսկապէս անտանելի պղծութեան փակումն, որովհետև հրէաների համար գրված սահմանափակիչ կանոնները և օրէնքները կաշառակերութեան համար իբրև սիրված և ամենալաւ առարկայ են ծառայում. բարձրացումը երկրի արտադրութեան և ձեռնարկութեան. ֆինանսական դրութեան անպայման բարելաւումը և այլն։

Իսկ ինչ է, արդեօք, այս բոլորին հակադրվում։ Այն հաւատը, իբր թէ՝ հրեան կը կլանէ։ Հասկացէք, պարոնայք. մի՞թէ դուք, ռուս մարդիկդ, այդպէս ցած էք գնահատում մեր ցեղակիցների ընդունակութիւնները, որ սկզբից նրանց գերութեան էք մատնում։ Ես հաւատացած եմ, որ դա սխալ է, և որ ռուսը ռուս կը մնայ և՛ հրեայի հետ, և՛ առանց հրեայի։

Ես գտնում եմ, որ բոլոր ռուս լաւ մարդիկ, որ կուսակցութեան էլ որ նրանք պատկանեն, պէտք է աշխատեն ոչնչացնել «անիծեալ հարցը», պէտք է ողջունեն նրա լուծումը, երբ էլ դա լինի. իսկ հրէաները դրան պէտք է հասնեն միացեալ ոյժերով յանուն իրանց մարդկային արժանապատւութեան։ Հրեան կարող է հաւատացեալ միապետական կամ անիշխանական լինել, կարող է յետադէմ կամ արմատական լինել, բայց մի բանում միշտ նրանք պէտք է միանան—մոռանալով ամեն տարբերութիւն,—միաձայն հաւասարութիւն պահանջել իրանց ցեղակիցների համար. այդ պահանջը արդարացի է, և նրան պէտք է միանան բոլոր արդար և շիտակ մարդիկ։

(«Страна»)

ՆԱՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Նաւթային համագումարի հոկտեմբերի 23-ի խորհրդակցութեանը Վ. Պ. Լիտվինով-Ֆալինսկին յայտնել է համագումարին—վերջին ժողովի յանձնարարութեամբ իր, Բագուի բանուորների ներկայացուցիչների հետ ունեցած խօսակցութեան հետևանքները։ Վերջինների առաջադրած պահանջները ստորաբաժանվում են մի քանի խմբակների։ Նրանց մի կէտերը մատնանշում են բանուորների ընդհանուր դրութիւնը և կեանքում գործադրվել կարող են միայն օրէնսդրական կարգով։ Մնացածները վերաբերում են արդէն գոյութիւն ունեցող օրէնքների անկանոն գործադրութեանը—նաւթարդիւնաբերողների կողմից։ Վերջապէս, պահանջների երրորդ տեսակը—գոտ պայմանագրի բնաւորութիւն են կրում։ Այդ բոլոր հարցերի լուծումը դուրս է ներկայ համագումարի իրաւասութեան շրջանակներից։ Նաւթարդիւնաբերողները այդ լուծման վերաբերում են շատ սառը, և նոյնիսկ նրանցից շատերը այսօր մեկնում են կապալով տրվող նաւթային հողերի աճուրդին ներկայ լինելու համար։

Բանուորները բոլոր այդ հանգամանքները կշռել են և եկել են այն եզրակացութեան, որ համագումարին բանուորական հարցի յետագայ քննութիւնը անօգուտ է։ Ուստի նրանք պահանջում են, որ այդ հարցը ամենամօտիկ ապագայում քննվի տեղում, Բագւում, ինչպէս նաւթարդիւնաբերողների կողմից լիովին լիազօրված ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Նրանք նաև ցանկութիւն են յայտնում, որ այդ խորհրդակցութեան կազմելու նախաձեռնութիւնը բղխէր կառավարութիւնից։

Խորհրդակցութեան նախագահ մինիստր պ. Ֆիլոսոֆովը բանուորների պահանջը միանգամայն ընդունելի է համարել և հիմնվել է այն նաւթարդիւնաբերողների վրա, որոնք նախ քան նիստը նրան յայտնել են, որ միանգամայն պատրաստ են բանուորների հետ բանակցութիւններ վարել։

Ուրեմն հարցը սկզբունքով վճռված է և խորհրդակցութիւնը անցել է մանրամասնութիւններին—ներկայացուցիչների ընտրութիւնների սիստեմին, խորհրդակցութեան ժամանակին, և այլն։

Բանուորների ներկայացուցիչները ցանկութիւն են յայտնել, որպէսզի ընտրութիւնների կազմակերպելը յանձնվէր հէնց իրանց—բանուորներին, և որպէսզի ոստիկանութիւնը չը միջամտէ և ճնշում գործ չը դնէ։ Ապա, նրանք երկիւղ են կրել, թէ մի գուցէ նախագծվող խորհրդակցութիւնը յետաձգվի աւելի կամ պակաս ժամանակով։

Վ. Դ. Ֆիլոսոֆովը հանգստացնում է նրանց և իր համոզմունքն է յայտնել, որ կառավարութիւնը կը թոյլատրէ բանուորներին խորհրդակցել միմեանց և իրանց տէրերի հետ, եթէ միայն նրանք ժողովների ազատութիւնը չը գործադրեն քաղաքական նպատակների համար...

Ապա կարդացվում են Բագուի բանուորների 30 պահանջները։

Նրանցից ամենագլխաւորները հետևեալներն են.

1) 8 ժամեայ բանուորական օր, 2) Նշանակածից դուրս և աճորդային աշխատանքների լիակատար վերացումն և գիշերային փոխանակութիւնների (ночная смѣна) մտցնումն, 3) մայիսի մէկը տօնել, 4) Նորից իրանց հին տեղերը վերընդունել գործադուլի քաղաքական համոզմունքների համար արձակած բոլոր ծառայողներին և բանուորներին, 5) գործադուլների ժամանակ չաշխատած օրերի լիակատար վարձատրութիւն, 6) տալ բնակարանների վարձ—ընտանիքաւորներին՝ 16 րուբլի, ամուրիներին՝ 9 ր. ամսական. 7) բանուորների և տէրերի միջև ծագած բոլոր թիւրիմացութիւնները վճռում է միջնորդ դատարանը—որ կազմվում է երկու կողմերի հաւասարաթիւ ներկայացուցիչներից, 8) բանուորների ապահովագրութիւն տէրերի հաշւով, 9) հիւանդ և հաշմանդամ բանուորին գործարանատէրը պէտք է լիովին վճարէ ռոճիկը, 10) ամեն տեսակ տուրքերը և տուգանքները վերացվում են, 11) իւրաքանչիւր ֆիրմայում պէտք է լինի գրադարան՝ շաբաթաթերթերով և ամենօրեայ լրագիրներով, 12) բանուորների որդիքը միջնակարգ կրթութիւն են ստանում ֆիրմայի տիրոջ հաշւով, 13) բանուորների համար պէտք է հաստատվեն առանձին շէնքեր, այդ շէնքերը միացնող էլեկտրաքարշներ, 14) իւրաքանչիւր բանուոր մէկ և կէս ամսեայ արձակուրդ է ստանում—հանդերձ ռոճիկի և բնակարանային վարձի։

Պահանջների մնացած կէտերը վերաբերում են զանազան ազատութիւնների, գործադուլին ոստիկանութեան չը միջամտութեան և գործադուլներին ընդարձակ օգնութիւն՝ տէրերի հաշւով կազմակերպելուն։ Ապա խորհրդակցութիւնը անցել է բանուորական շէնքեր հիմնելու հարցին։—Դա հին հարց է։ Դեռ 1896 թ., պալատական բժիշկ Բերգէնսօնը հետազօտելով Բագուի պրօմիսլաները, մատնանշել է բանուորական շինութիւնների հակասանիտարական դրութիւնը, բայց մինչև այժմ այդ գործի նկատմամբ ոչ մի բարելաւում արված չէ։ Ինչպէս խոշոր և փոքր գործարաններում, այնպէս և, առաւելապէս, մասնաւոր բնակարաններում բանուորները ապրում են ծայրայեղ նեղուածքութեան մէջ, ամենահակաառողջապահական պայմաններում։

Թւերով ապացուցված երկար զեկուցագիրը համագումարին գաղափար է տալիս, թէ ինչպէ՛ս է ապրում բանուորը, և առաջարկել ու պարզել է բանուորական յատուկ բնակատեղիների իրականացման անհրաժեշտութիւնը։

Բանուոր պատգամաւորներից մէկը, Սև քաղաքի ներկայացուցիչը մի երկար ճառով նկարագրում է նաւթային պրոլետարիատի բնակարանային կարիքի սրտաճմլիկ պատկերը։ Պրոմիսլաների կուսակ դրութիւնը այնպէս է ազդել բնակարանների թանկութեան, որ ամենափոքրիկ սենեակը նստում է ամսական 10 րուբլի։ Նոյն կացութիւնն է, հաւանօրէն, որ ազդել է առաջին անհրաժեշտութեան ուտելիքների վրա։

Նաւթային րայօնի իշխանութիւնը նոյնպէս մտել է բնակարանավարձողների դրութիւնը, թոյլատրելով նրանց ժողովել և քննել այն հարցը, թէ ինչ միջոցով կարելի է ազդել տանտէրերի վրա։ Բայց այդ գործը ընթացք չէ ստացել ապագայում, որովհետև իշխանութիւնների իրաւասութիւնից դուրս է ազդել բնակարանային գների վրա։ Վերջում հռետորը յիշում է այն տեղերը, որ կան Սև և Սպիտակ քաղաքներում և յարմար են շէնքերի համար։

Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ պ. Ջունկովսկին յայտնել է, որ այդ հողերը, ամենայն հաւանականութեամբ, կարելի է և կը յատկացվեն շէնքերի համար, բայց և այնպէս շատ է կասկածվում՝ թէ նաւթարդիւնաբերողները կը կառուցե՞ն արդեօք այդ հողերում բանուորների համար բնակարաններ... Խօսվել է նաև բանուորների կենցաղի և նրանց բնակարանների բարելաւման միջոցների մասին, սակայն խորհրդակցութիւնը մի որոշ կէտի չէ յանգել։

Առ այժմ մինիստր Վ. Դ. Ֆիլոսոֆովի առաջարկութեամբ վճռված է հոգալ, որ այդ հարցը մտցվի ծրագրի մէջ և քննվի նաւթարդիւնաբերողների մօտակայ համագումարում։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Դաւաճանութիւն» իշխան Սումբաթովի։

Նոյեմբերի 6-ին Թիֆլիսի հայ դրամատիկական խումբը Թիֆլիսի Արտիստական թատրոնում ներկայացրեց իշխան Սումբաթովի յայտնի «Դաւաճանութիւն» դրաման 5 գործողութեամբ։

«Դաւաճանութիւն» պիէսը մի քանի անգամ ներկայացվել է հայկական բեմի վրա և մտել է հայկական րեպերտուարի մէջ, իբրև յաջողութիւն պահպանող պիէսներից մէկը։ Շնորհիւ բեմականութեան, գրաւիչ բովանդակութեան և դէպքերի, տպաւորիչ տեսարանների, պիէսը բևեռում է իր վրա հանդիսականների ուշադրութիւնը։

Մենք խօսել ենք այդ պիէսի և նրա դերակատարների մասին նախկին ներկայացումների առիթով։ Գլխաւոր դերակատարները մնացել էին նոյն անձերը։ Այդ պատճառով մենք կանենք միայն մի անցողակի նկատողութիւն։

Տիկին Սիրանոյշ Զէյնաբի դերում բնորոշ և տպաւորիչ էր իր փոփոխակի տրամադրութիւնների մէջ։ Նա տիպիքական է, երբ ներկայացնում է հարեմական թագուհուն և փաղաքշում ու գրաւում է բռնակալ Սուլէյմանին. գեղեցիկ է այն տեսարանում, երբ նա հանդիպում է իր որդուն և ողջագուրում է նրան։ Համեմատաբար թոյլ տպաւորութիւն թողեց երրորդ գործողութեան մէջ, որտեղ պահանջվում էր ոչ այնքան քնքշութիւն և տանջանքի արտայայտութիւն, որքան հերոսութիւն և կամքի ոյժ։ Սակայն դերի տպաւորութիւնը այդ գործողութեան մէջ թուլացնում էր և փչացնում ցածրաձայն արտասանութիւնը, այդ պատճառով դերի մեծ մասը մնաց անյայտ ունկնդիրների համար։

Տիկին Մայսուրեան Բօկչայու դերին տուել էր որոշ ամբողջութիւն և տիպիքականութիւն։ Նա ուսումնասիրել է այդ դերը։

Տիկին Նոնիկեան առաջին անգամ հանդէս եկաւ Գայիանէի դերում և նրան կատարեց շատ բաւարար կերպով։ Դերասանուհու այդ օրվայ խաղը ցոյց տուեց, որ նա առաջադիմում է։ Նա ուսումնասիրել էր տիպը և իւրացրել նրա հոգեբանութիւնը։ Նա բնական էր և հարազատ իր խօսակցութեան և շարժումների մէջ։

Յարութիւնեան Սուլէյման-խանի դերում աւելի աջող էր քան անցեալ տարի։ Արտասանում էր աւելի բնական ձևով, ոչ կեղծ-դասական։ Նրա դերի տպաւորութեանը միայն վնասում էր ցածր ձայնով արտասանելը։

Աբելեան տուել էր Օթար բէգի դերին նոր գծեր և արտայայտութիւն։ Նա աշխատել էր դարձնել նրան աւելի մօտ վրացական թաւադների տիպին, սակայն նա դեռ վերջնականապէս չէ կատարելագործել այդ նոր արտայայտութիւնը։

Զարիֆեան Երեկլէի փոքրիկ դերում աջող էր, բնորոշ։

Թաշչեան Անանիայի դերում տիպիքական էր և հետաքրքրական իր առաջին տեսարաններում, բայց յետոյ չը կարողացաւ հաւատարիմ մնալ իր վերցրած տոնին և ներկայացրած տիպին։

Ազդալեան Սարայի դերում բաւական աջող էր։

Արաքսեան Բեսօյի դերում բաւարար էր, բնական, բայց նա դարձրել էր այդ տիպը չափազանց հասարակ և առանց այն ներքին իմաստի, որ նրա մէջ գոյութիւն ունի։

Մանուէլեան Կարա-Իւսուֆի դերը կատարեց բնորոշ կերպով և տուեց նրան որոշ տիպի արտայայտութիւն։ Անցեալ տարի այդ դերը անցնում էր բոլորովին աննկատելի և անգոյն։

Տ. Օհանեան, տ. Վարդուհի, Աբէլխանեան և միւսները լրացնում էին անսամբլը։

Ներկայացումը գրաւել էր մեծ բազմութիւն դէպի թատրոնը։

Խաղացողները արժանացան ջերմ և բուռն ծափահարութիւնների։

Սիրող

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Նոյեմբերի 3-ին

«Ձմեռն էլ եկաւ», դուրս թռաւ ակամայ սրտիս խորքից, երբ անցեալ ամսի (հոկտեմբերի) 25-ին, վաղ առաւօտեան տնից դուրս գալով ուզում էի գնալ գործիս։ Այո, ձմեռն էլ եկաւ, բայց ո՛չ թէ մեզ՝ փոքր ի շատէ նիւթական միջոցների տէր մարդկանց համար, ո՛չ. այլ չունևոր, անտուն, անտէր, դժբաղդ, բազմազաւակ, հայրենազուրկ մարդկանց ու ընտանիքների։ Այդ առաւօտեան քաղաքիս գլխաւոր—Ալէքսանդրեան փողոցով անցնելիս ես արդէն նկատեցի շատ յուսակտուր, տխուր, մաշուած, կորացած մէջքերով դէմքեր, որոնք գնում էին այս ու այն կողմ իրանք էլ չիմանալով թէ ուր...

Շնորհիւ վրահաս ցրտերի, անասելի թանկութեան ու բազմաթիւ ու բազմատեսակ կենսական պահանջների՝ մի տեսակ համաճարակ է տարածվում այստեղ, չունևոր դասակարգի մէջ.—գողութիւնը, որ ինչպէս անցեալ տարիները, այս տարի էլ մի քանի տասնեակ ընտանիքների գլուխներ կամ անդամներ բանտ էր նետէ... Այժմեանից երևում են, որ մի՛ վերին աստիճանի ցաւալի և միանգամայն դատապարտելի երևոյթ է. դատապարտելի ասացի, որովհետև շատ-շատերը բանտվելով թշուառացնում են վերջին ծայր իրանց ընտանիքները։

Երէկ երեկոյեան, մօտաւորապէս ժամի 8-ին քաղաքիս «Հիւանդների ընդունարանի» (Пріемный покой) առջև ականատես եղայ մի զարհուրելի տեսարանի.—Նահանգական բանտից բերում էին ֆուրգօնով հիւանդանոց հինգ սպանված բանտարկեալների դիակներ... Ո՛հ, մի վայրկեանում ամբողջ մարմնովս սարսուռ անցաւ, չը կարողացայ զսպել ինձ, չարտասվել... Տէ՛ր իմ, այդ հինգ հոգին բանտի մէջ սպանվել էին 2—3 րօպէի մէջ,—ինչպէս լսեցի մի տեղեակ մարդուց,—բանտի օրապահ զինուորների ու ստրաժնիկների ձեռքով, և՛ ինչպէս իմացայ, նրանց յանցանքը կայացել է նրանում, որ փորձել են փախչել բանտից... Այդ դժբաղդ արարածներից մէկը բարձրանում է պատի վրա և իսկոյն նկատվելով պահապան զինուորից՝ տեղն ու տեղը գնդակահարվում է, և այլն ըստ կարգին։

Ասում են, որ նրանք դուրս են եկած եղել վառէքկլօզետի երկաթապատ օդանցքից՝ կտրելով, ի հարկէ, այն։

Այդ դժբաղդ մարդկանց 2-ը հայ է, 2-ը թուրք և 1-ը վրացի.—բոլորն էլ մեղադրվում էին, ինչպէս լսեցի, խոշոր յանցանքների մէջ։

Ինչևիցէ։ Խիստ քննութիւնը կը պարզէ ամեն բան և հասարակութեան վրդովված սրտերը կը խաղաղվեն։

Թղթակից

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 5-ին

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսից հաստատված Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան և նուիրատուների, որ նա ստացել է սկսեալ իր հաստատութեան օրից—այն է 1905 թ. փետրվարի 13-ից՝ մինչև 1906 թ., փետ. 5 ը, նուէրներ ի նպաստ հայ տառապեալների—Ռուսաստանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Թիւրքիայի, Պարսկաստանի և Եւրոպայի հայերից և զանազան ազգային հաստատութիւններից ընդամենը 217,192 ր., 52 կ.։

Այս գումարից մինչև վերոյիշեալ 1906 թ. սեպտեմբերի 5-ը ծախսված է տառապեալների համար 212,134 ր. 68 կ., հետևեալ կերպով. 1) Ուղարկված է Բագու՝ Մարդասիրական Ընկերութեան՝ 8178 ր. 45 կ., 2) Ուղարկված է Հին-Նախիջևան՝ 24,136 ր. 80 կ., 3) Շուշի՝ 25,516 ր. 40 կ., 4) Գանձակ՝ 27,008 ր. 10 կ., 5) Նուխի և Արէշ՝ 11,206 ր. 40 կ., 6) Զանգեզուր՝ 9109 ր. 70 կ., 7) Ղազախի, Շամշադինի և բաղացիների համար՝ 19 993 ր. 64 կ., 8) Զարդախլուի գիւղացիներին՝ 2000 ր., 9) Զայլու գիւղին՝ 500 ր., 10) Ղարաբաղի Մասնաժողովին (փոխարինաբար) 2 00 ր., 11) Երևան՝ 18,832 ր., 12) Արէշի գաւառի 3 հայ գիւղերին՝ 2000 ր., 13) Շուշու քաղաքի հիւանդանոցին՝ 1000 ր., 14) Ալէքսանդրօպոլ՝ 500 ր., 15) Գնված է ալիւր, զանազան ապրանք, երկրագործական գործիքներ և այլ նիւթեղէն և ուղարկված գաւառները տառապեալների համար՝ 14,941 ր. 16 կ., 16) Ապրանքների, ալիւրի փոխադրութեան վարձ երկաթուղուն՝ 1831 ր. 89 կ., 17) Բժշկական օգնութիւն, այն է՝ բժիշկներ, դեղօրայք, ֆելդշերներ ուղարկելու գաւառները, նաև փաստաբաններ՝ 10,524 ր. 32 կ., 18) Տնայնագործութեան արհեստը տարածելու համար գիւղերում նպաստ, 2503 ր. 50 կ., 19) Զանազան, այն է՝ գիւղատնտեսներ ուղարկելու՝ գիւղերի դրութիւնը ուսումնասիրելու համար, կօմիսօններ, սերմացու և այլն՝ 1376 ր. 85 կ., 20) Թիֆլիսում—Յանձնաժողովի տնօրէնութեամբ և նրանից կարգված մասնաժողովների ձեռքով ծախսված է հայ-թուրքական կոտորածի վայրերից փախած տառապեալներին խնամելու և պատսպարելու երկար ամիսների ընթացքում, ինչպէս և նրանց իրանց տեղերը յետ ուղարկելու և ուրիշ այլ պէտքերի համար 22,711 ր. 87 կ., 21) Նոյն նպատակով, այն է արկածեալներին օգնելու համար տրված է Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան՝ 2000 ր., 22) Նոյն նպատակով ծախսված է Յանձնաժողովի նախագահ Գարեգին արքեպ. Սաթունեանի ձեռքով 2634 ր. 10 կ., 23) Դիւանական ծախքեր եղել են 440 ր., 24) Հաշիւների տպագրութեան՝ 189 ր. 50 կ., 25) Ղարաբաղցիներին (փոխարինաբար) 1000 ր., ընդամենը 212,134 ր. 68 կ.։

Ուրեմն առ 5-ն սեպտեմբ. 1906 թ. Յանձնաժողովիս դրամարկղում մնում էր պատրաստի գումար 5057 ր. 84 կ., իսկ ներկայումս Յանձնաժողովիս բոլոր միջոցները սպառված են։

Եւ սակայն անհագին է տառապեալների կարիքը, անհուն են նրանց վշտերը, որոնց ամոքելու համար Յանձնաժողովս չունի որևէ միջոց, քանի որ նուէրների աղբիւրը ցամաքել է և հայ հասարակութիւնը, կարծես, մոռացութեան է տուել իր տասնեակ հազարաւոր տառապեալ եղբայրներին։

Յանձնաժողովս նորից կոչ անելով հայ ժողովրդի և մանաւանդ հայ հարուստների մարդասիրական զգացմունքներին, չէ կորցնում առաւելն իր յոյսը և հաւատը, որ նուէրները դարձեալ կըսկսեն տեղալ, և Յանձնաժողովս հնարաւորութիւն կունենայ գոնէ ամենափոքր չափով ամոքել տառապեալների ցաւերը։

Յանձնաժողովս պարտք է համարում իր շնորհակալութիւնը յայտնել բոլոր նուիրատուներին, որոնց անունները իր ժամանակին մանրամասն կը տպագրվեն, և առիթից օգտուելով է գալում՝ յատուկ շնորհակալութիւն յայտնելու Վենետիկի Մխիթարեան Հայ Միաբանութեան, որ նուիրեց 1000 օրինակ պատկերազարդ «Գեղունի», որից գոյացած արդիւնքը 4000 ր. յատկացրած է հայ տառապեալներին։ Յանձնաժողովս յոյս ունի, որ հայ հասարակութիւնը օր առաջ կըսպառէ գնել այդ գեղեցիկ գիրքը, որպէս զի Մխիթարեան հայրերի փափագը կատարված լինի։

Յանձնաժողովի անդամ գանձապահ՝

Ալ. Մէլիք-Ազարեան

Անդամ-քարտուղար՝ Հ. Առաքելեան

—

Թիֆլիս, նոյեմբերի 7-ին

Տրամվայի բանուորներս կարդալով «Երկրի» նախորդ համարում 13 ստորագրութեամբ տրամվայի բողոքը, հետաքրքրվեցինք և իմացանք, որ մեր ընկերներից անկախ՝ շինծու մի բողոք է երկրականների զրպարտութեան օջախում թխված։ Յայտնելով այդ առթիւ մեր զզւանքը զրպարտիչ թերթին, մեր խորին յարգանքն ենք յայտնում «Մշակին», որ նա խիզախօրէն մերկացնում է կեղծ-յեղափոխականների պատկերը՝ արձանագրելով ժողովրդի ցասման բողոքները։

Մ. Զաւալակեան, Մ. Յակոբեանց, Տ. Յովսէփեան, Մ. Մաղմանեան, Ա. Թորոսեան, Ե. Պապեան, Կ. Ղլըճեան, Ե. Բաղինով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի թերթերում հրատարակված է ցուցակը Պետական Դումայի այն նախկին անդամների, որոնք ենթարկված են դատաստանական պատասխանատւութեան քրէական օրէնսգրքի 51-ը յօդ. և 129 յօդ. 3-րդ կէտի I մասի հիման վրա, «Վիբորգի կոչը» կազմելու համար։ Բոլոր մեղադրվողների թիւը 180 է, դրանց թւում նաև հետևեալ հայ, վրացի և թուրք պատգամաւորները—1) բժշ. Ա. Փ. Այվազեան, 2) երդուեալ հաւատարմատար Ս. Ջափարիձէ, 3) Իսմայիլ-խան Աբուլֆաս-խան Զիատխանով, 4) բժ. Խաչ. Բահաթրեան, 5) Գեղամ Տէր-Պետրոսեան, 6) գիւղացի Ի. Ի. Րամիշվիլի, 7) երդուեալ հաւատարմատար Ալի Մարդան-բէկ Թոփչիբաշեվ, 8) գիւղացի Լ. Թումանեան։ Համաձայն օրէնքի, դատի ենթարկված պատգամաւորները չեն կարող վերընտրվել Պետական Դումայի անդամ, մինչև որ դատի տակ են։

—

Սղնախի գաւառապետ Գուգուշվիլին Գօրու գաւառն է կանչված՝ պաշտօնից հեռացող գաւառապետ Ըէզանովի պաշտօնը վարելու համար։

Ինչպէս տեղեկացանք, Բամբակեան ս. Գէորգ եկեղեցու ներքին քանդակագործական զարդարանքի և նկարների պատրաստելու գործը յանձնարարված է նկարիչ Ա. Ֆէթվաճեանին, որի պատրաստած ծրագիրները արդէն ընդունվել են շէնքի ճարտարապետի, շինարար յանձնախմբի ու ծխական ժողովի ընտրված մասնաւոր յանձնախմբի կողմից։ Ենթադրում են, որ եկեղեցին բոլորովին պատրաստ կը լինի մինչև եկող Զատիկ։

Ի նկատի ունենալով, որ Յաֆանեան դըպրոցի մի քանի աշակերտուհիներ քութեշով հիւանդ են, որոնցից մէկը արդէն մեռել է, յիշեալ դպրոցում ուսումը դադարեցված է 2 շաբաթով։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ուրբաթ, ամսոյ 10-ին, «Կովկաս-Տարազի» խմբագրութեան կից «Գրական-Երաժշտական Սալոնի» հերթական jour fixe-ը նուիրված է Գ. Պետրոսեանի յիշատակին և այդ երեկոյ մուտքը բոլորի համար անխտիր վճարով է յօգուտ Պետրոսեանի որբերի։ Երեկոյթը բաղկացած կը լինի երեք բաժիններից՝ գրական, երաժշտական և զրոյց (Պետրոսեանի կեանքից էպիզոդներ, քարակտերիստիկ և այլն)։ Երաժշտական մասում սիրայօժար ցանկութիւն են յայտնել մասնակցելու՝ տիկնայք Ի. Ս. Այվազեանց (դաշնակ), Հ. Կ. Նաւասարդեան (դրամատիկ սոպրանո), Ս. Ա. Սափարովա-Շէքոեվա (լիրիկօ կօլօրատուր սոպրանօ), պ. պ. Ի. Մ. Մատկովսկի (դաշնակ), Բ. Գ. Շէբուեվ (բարիտօն), Լ. Մ. Ծէյտլին (ջութակ)։ Գրական մասում կը մասնակցեն ռուս, վրաց և հայոց դրամատիկ խմբերից։ Որովհետև մուտքի տոմսերի թիւը սահմանափակ է, ուստի թիւրիմացութիւն չը լինելու պատճառով ցանկալի է, որ վաղօրօք ձեռք բերեն մուտքի տոմսերը «Սալոնի բիւրօից» (Мадатовская, 5) նրանք, որոնք կը կամենան ներկայ լինել այդ երեկոյթին»։

Նոյեմբերի 6-ին քաղաքային դումայի նիստում որոշվել է ելէքտրաքարշի գիծը Երեւանեան հրապարակից տանել դէպի Վելեամինովսկայա փողոցը ու այնտեղից Լերմոնտովսկայա փողոցով տանել մինչեւ Վօզնեսենսկայա փողոցի վերեւը։ Անօնիմ ընկերութեան դիրեկտորի առաջարկած նախագիծը դրա առիթով չէ ընդունվել։

—

Նոյեմբերի 10-ին Թիֆլիսի Նահանգական բանտում նշանակված է զինւոր Իվան Կօսեակի գործի քննութիւնը, որը մեղադրվում է զինւորների մէջ թռուցիկներ տարածելու գործում, որով կոչ էր անում տապալել ներկայ պետական կազմը։ Գործը կը քննվի դռնփակ։ Մեղադրվողին պաշտպանում է երդ. հաւատ. օգնական Ի. Կ. Մաճավարիանին։

—

Թիֆլիսում նշանակված Թիւրքաց հիւպատոս Ռաֆեթ-բէյը նոյն պաշտօնով տեղափոխվել է Լօնդօն, իսկ նրա տեղ նշանակված է Լիվերպուլի Թիւրքաց գլխաւոր հիւպատոս Ֆեյզի-բէյը։

—

Նոյեմբերի 7-ի գիշերը Դիդուբէում անյայտ անձի ձեռքով վիրաւորվում է Անդրկովկասեան երկաթուղիների գլխաւոր արհեստանոցների բանւոր Ալէքսանդր Բրիխնիչեվը, որը բժշկվելու համար տեղաւորված է երկաթուղային հիւանդանոցում։

—

Այսօր Թիֆլիս է հասնելու Բրիւսէլից ինժեներ Գերմանը, որ ուղարկված էր Բէլգիա «Գէմօս» ընկերութիւնից ընդունելու Թիֆլիսի ելէքտրաքարշին վերաբերեալ բոլոր իրերը։

—

Նոյեմբերի 7-ին, երեկոյեան ժամը 6-ին, Ելիզավետինսկայա փողոցում, Պրիկաշչիկովի տանից ոչ հեռու, մայթի վրա անյայտ չարագործի ձեռքով սպանվում է անանուն մի մարդ, ըստ երեւոյթին տեղացի բանւորներից։ Դիակը տարված է Միքայէլեան հիւանդանոցը։

—

Մետէխի բանտից արձակել են մօտ օրերս բանտարկած Ռօտինովի և Նարալովի գործակատարին։

—

Նոյեմբերի 3-ին Թիֆլիսի դատաստանական պալատում դռնփակ քննվելու է պայթուցիկ նիւթեր պահելու և գաղտնի ընկերութեան պատկանելու մէջ մեղադրվող Գրիգորի Պատաշվիլու գործը։ Նոյն օրը քննվել է նոյն յանցանքի մէջ մեղադրվող Ջակէլի ամուսինների գործը եւս։

—

Պ. Կաղաձէին սպանող Դաւիթ Սօրէվը զինւորա-դաշտային դատարանից հրացանազարկութեան է դատապարտվել։

—

Թիֆլիսի ելէքտրաքարշի անօնիմ ընկերութեան վերատեսուչը բաւարարութիւն է տուել Միքայէլեան հիւանդանոցի վարչութեան յայտարարութեանը, որով վարչութիւնը խնդրել էր հնարաւորութիւն տալ իրանց ձրի օգտվել ելէքտրական հոսանքից ռենտգենեան ապարատի համար, որի մէջ վերջին ժամանակներս առանձին կարիք է նկատվում։

—

Քաղաքային թոշակները յատկացրված են՝ I գիմնազիայում՝ Աստղիկ Սարգսեանին, II գիմնազիայում՝ Թամարա Փէյքրիշվիլիին։

—

Մօտ օրերս Բագւում լոյս է տեսել դադարեցրած «Հէյաթ»-ի տեղ «Ֆէյուզաթ» լրագիրը, որի խմբագիրն է Ալի-բէկ Հուսէյնզադէ։

—

Աղստաֆայից «Гол. Кав.» լրագրին գրում են հետեւեալ սարսափելի դէպքի մասին։ Նոյեմբերի 3-ին, առաւօտեան 8 ժամ 50 ր. դէպօ մտնող մարդատար գնացքի շոգեմեքենան վրա է հասել անցնող վաճառական Մովսէս Եզիլեանի վրա և ջախջախել է նրան։

—

Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխ Տիգրանեանին և Ալէքսանդրապօլի դումայի ձայնաւոր Ստեփանեանին փոխարքան հաստատել է Ալէքսանդրօպօլի առեւտրական դպրոցի հոգաբարձուներ ընթացիկ քառամեակի համար։

—

Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողների ցուցակները կազմելու համար քաղաքային վարչութիւնը երկուշաբթի, նոյեմբերի 6-ին հրաւիրել է, բացի նախկին 10 հոգուց, էլի 27 հոգի, բացի քաղաքային վարչութեան ծառայողների կազմից։ («Т. Л.»)

—

Ուսումը քաղաքային Միքայէլեան արհեստաւորաց դպրոցում, որը դադարեցված էր այն պատճառով, որ աշակերտները առանց թոյլտուութիւն խնդրելու ժողով էին գումարել, մտադրութիւն կայ վերանորոգել նոյեմբերի 9-ին։

—

Կառավարչական շրջաններում հարց է ծագել փոխելու Քրէական Դատաստանագրքի 5-րդ յօդուածը, որը հիման վրա, ինչպէս յայտնի է, Ֆինլանդական Մեծ իշխանութեան սահմաններում կատարվող յանցանքները չեն ենթարկվում ռուսական դատարաններին, բացի օրէնքով յիշված դէպքերում։ Մտադրութիւն կայ պետական բնաւորութիւն ունեցող բոլոր յանցանքները, որոնք նախատեսնված են Քրէական Դատաստանագրքի 129—132 յօդուածներով, անկախ նրանից՝ թէ որտեղ են կատարված, ենթարկել ռուսաց արքունական դատարանների տեսչութեանը։ («Р. В.»)

—

Վըբօրգում կալանաւորված են մի քանի ռուսներ, որոնց վրա կասկած է ընկնում, որ նրանք պատկանում են ռուսաց յեղափոխական կուսակցութիւններին։ Առայժմ դեռ նրանք պահվում են Ֆինլանդիայում։ («Р. В.»)

—

Նոյեմբերի 7-ի գիշերը, 10-րդ Թաղամասում, Մելիտինսկի և Մօլօկանսկի փողոցների անկիւնում անյայտ չարագործի արձակած գնդակով պարանոցից վիրաւորվում է տեղական հայրենասիրական ընկերութեան անդամ 3-րդ հաշտարար դատարանի ցրիչ Պաւէլ Գօլենիկովը։ Վիրաւորին տարել են քաղաքային Միքայէլեան հիւանդանոցը. վէրքը փաթթելուց յետոյ նա փախչում է հիւանդանոցից։

Դեկտեմբերի 31-ին զինւորական-բժշկական ճեմարանի կառավարիչ Ա. Դանիլեվսկին գնացել է զինւորական մինիստրի մօտ ներկայացնելու ուսանողական ընդհանուր ժողովի վերջին բանաձեւը, որ հաստատում է բանւորական խորհրդին արտայայտված համակրական առաջին բանաձեւը։ Որովհետեւ զինւորական մինիստրը արդէն լրագրներից գիտէր այդ վերջին որոշման մասին, ուստի չէ ընդունել ճեմարանի կառավարչին։ Նոյեմբերի 1-ին կարգադրութիւն է եղել փակել ճեմարանը իր բոլոր հաստատութիւններով։ Փակված է նոյնպէս ընթերցարանը, մատենադարանը և ուսանողական սեղանատունը։ Միակ հաստատութիւնը, որտեղ ուսանողները ազատ մուտք ունեն առ այժմ,—հիւանդանոցի և ճեմարանի կլինիկաներն են։ («Р. В.»)

—

Ինչպէս մայրաքաղաքի լրագիրները հաղորդեցին, Խարկովի տեխնօլօգիական ինստիտուտի ուսանողների աւագների խորհուրդը կալանաւորված է, որոնց հետ միասին և մի քանի ուրիշ ուսանողներ։ Այդ առիթով Մոսկվայի համալսարանի ռեկտորը դիմել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին հետեւեալ հեռագրով. «Նորին գերազանցութեան ժողովրդական լուսաւորութեան մինիստրին։ Ուսանողները դիմեցին ինձ խնդրելու ձեզ Խարկովի տեխնօլօգիական ինստիտուտի իրանց ընկեր-աւագների վիճակը թեթեւացնելու համար։ Ի նկատի առնելով, որ, լրագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ խնդիրը ակադեմիական բնաւորութիւն ունեցող յանցանքների մասին է և որ ուսանողներին զինւորական դատարանին յանձնելու փաստը ինքնըստինքեան սպառնում է յուզմունք առաջ բերելու ակադեմիական միջավայրում, պարտք եմ համարում ներկայացնելու ձերդ գերազանցութեանը, ուսանողների կողմից ինձ ուղղած այդ խնդիրքի մասին։ Միեւնոյն ժամանակ ի բոլոր սրտէ միանալով իրանց ընկերների մասին ցոյց տուած այդ հոգատարութեան, թոյլ եմ տալիս ինձ խնդրելու ձերդ գերազանցութեանը որպէսզի նպաստէք ուսանողական աւագներին ազատելու զինւորական դատարանի ձեռքից։ Մոսկվայի համալսարանի տեսուչ Մանուիլով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ

Լիմօժի սօցիալիստիկական համագումարը։— Այս տարվայ նոյեմբերի 1-ին Լիմօժում բացվել է ֆրանսիական սօցիալիստական կուսակցութեան ազգային երրորդ համագումարը։ Համագումարին ներկայ են 289 պատգամաւորներ—շրջանային 60 ֆեդերացիաների կողմից, որոնց թւումն են նաեւ ֆրանսիական սօցիալիզմի բոլոր բազմաթիւ ֆրակցիաների— որոնք, ինչպէս յայտնի է, միացել են Ամստերդամի համագումարից յետոյ ազգային մի կուսակցութեան մէջ—պարագլուխները։

Համագումարի առաջին նիստը բացվել է Փր. դէ-Պրեսանսէի շնորհաւորական ճառով։ Ժողովին խօսած օտարազգի հռետորներից ամենամեծ աջողութիւն է գտել բէլգիական սօցիալիստների ներկայացուցիչ Անզիէլը, որը յայտնել է, որ միջազգային սօցիալիստական հետեւեալ կօնգրէսը կը գումարվի Պետերբուրգում։ Ռուս սօցիալիստ Րուբանովիչի ճառը աղմկալի ծափահարութիւններ է յարուցել։ Ընդունվել է մի բանաձեւ, որով համակրութիւն է յայտնվում «ժողովրդի տիրանների դէմ մարտնչողներ»-ին։

Նիստի կէսին, երբ խօսվելիս է եղել բացառապէս ձեւական բնաւորութիւն կրող—այսպէս օրինակ լիազօրութիւնների ստուգութեան, ֆինանսական հաշուի և այլն հարցերի մասին, անսպասելի կերպով բարձրացնում է ներկայ ժամեան ամենակենսունակ հարցը, թէ կուսակցութիւնը ինչ վերաբերմունք է ցոյց տալու դէպի Կլէմանսօի մինիստրութիւնը և թէ «միացեալ սօցիալիստների» խմբակը պարլամենտում ինչ դիրք է բռնելու։ Ինչպէս յայտնի է, անմիջապէս նոր մինիստրութիւն կազմվելուց յետոյ այդ հարցը քննադատվել է սօցիալիստական մամուլի մէջ։ Ի շարս «L'Humanité»-ում զետեղած յօդուածների, Ժօրէսը Կլէմանսօի կաբինէտին խոստացաւ կուսակցութեան աջակցութիւնը, երբ նա կը կատարէ իր ծրագիրը։ Մինչդեռ, համագումարին խօսող առաջին հռետորները սկսել են ապացուցել այդօրինակ պաշտպանութեան վըտանգը և առաջարկել են ժողովին՝ վճռական անվստահութիւն յայտնել Կլէմանսօի կաբինէտին և նախատինք՝ ընկերներից նրանց, որոնք կը կանգնեն կօմպրօմիսների ճանապարհի վրա։

Այդ յայտարարութիւնները Ժօրէսի կողմից բախվել են եռանդուն բողոքի և ընդդիմադրութեան։ Հռետորը գլխաւորապէս յարձակվել է կարծամտութեան վրա անհաշտելի սօցիալիստների, որոնք աշխատում են սահմանափակել կուսակցութեան գործունէութիւնը դօգմայի նեղ շրջանակներով։

«Կուսակցութեան սկզբունքները,—ասել է Ժօրէսը,—պարտաւորեցնում են նրան մշտակայուն օպպօզիցիա դառնալ մենաշնորհ դասակարգին, սակայն, միեւնոյն ժամանակ, այդ սկզբունքները չեն արգելում—լայն պրօպագանդա մղել սօցիալական օրէնսդրութեան բարելաւման և քաղաքական բարենորոգումների ընդլայնման համար։ Ես կուսակցութեան ընտրեալներից և ոչ մէկը մինչեւ այժմ չէ հրաժարվել դասակարգային օպպօզիցիայից։ Նա արտայայտվում է արդէն նրանով, որ «միացեալներից» ոչ ոք չէ մասնակցում իշխանութիւն իրականացնելու գործին։ Մենք ձախակողմեանների պատգամաւորութեան մէջ սեփական ներկայացուցիչներ չունենք և չենք քուէարկի կապիտալիստական բիւջէին։ Ո՞վ արդեօք մեզանից կը կասկածի յանուն մինիստրական պորտֆէլների—կուսակցութեան շահերը զոհելու ցանկութեան մէջ»...

Ապա անցնելով յատուկ իր հասցէին ուղղած կշտամբանքներին, Ժօրէսը ասել է, որ նա երբէք Կլէմանսօի մինիստրութեան նկատմամբ մի առանձին կողմնապահութիւն չէ ցոյց տուել. Նա մատնաշել է միայն, որ կուսակցութիւնը պէտք է օգտվի քաղաքական նոր կօմբինացիայով, որովհետեւ այդ կօմբինացիան (միացումն) առաջինն է և ամբողջ ծաւալով պարտաւորեցնում է արմատական - սօցիալիստներին՝ գործադրելու իրանց ծրագիրը։

«Մենք չը պէտք է ընդունենք պատասխանատւութեան ստուեր անգամ՝ այդ ծրագրի սպասելի խորտակման համար,—ասել է Ժօրէսը։ Եթէ միայն արմատականները անկեղծ կը լինեն, այն դէպքում աւանակներ միայն մենք կը լինենք»։

Ժօրէսի վերջին խօսքերը, որոնցով հռետորը կոչ է արել համագումարին՝ չը կապել կուսակցութեան պարլամենտական խմբակի ձեռքերը, թշնամական բացականչութիւններով են ընդունվել գէդիստների կողմից. «Մենք երբէք չենք հաշտվի Կլէմանսօի հետ,—աղաղակել են նրանք.—Մեզ պատնէշներ են բաժանում»։

Ժօրէսից յետոյ ամբիոն բարձրացած Ժիւլ Գէդը ասել է, որ համագումարը պէտք է խստութեամբ որոշէ կուսակցութեան դիրքը։ Հռետորը համամիտ չէ եղել Ժօրէսի նոր ծագած մինիստրութեան աշխատանքի մասին արտայայտած լաւատեսութեանը։

«Վստահելով այդ մինիստրութեան,—ասել է Գէդը,—մենք բանւորական դասակարգին վտանգաւոր իլիւզիաներ կը տանք։

Ճիշդ է, արդարեւ, մեր դրութիւնը այնքան էլ դիւրին չէ, սակայն չը պէտք է մոռանալ, որ մի անգամ ստեղծած իլիւզիաները շատ դժուար է ոչնչացնել։ Ժօրէսը արդարացի է, որ ամբողջ պատասխանատւութիւնը արմատական-սօցիալիստների վրա է ընկնում, բայց մենք կարող ենք արդեօք բաւականանալ սոսկ արմատական ծրագրով։ Ո՛չ։ Մենք անընդհատ պէտք է նրան սօցիալական ռէֆօրմ հակադնենք»։ Համապատասխան դրան, Գէդը առաջարկել է համագումարին՝ պարտաւորեցնել պարլամենտական խմբակին գործել անկախ և վարել անհաշտելի քաղաքականութիւն։

Ահա այն երկու թէզերը, որոնցից պէտք է համագումարը ընտրել. դատելով մեծամասնութեան տրամադրութեամբ—աջողութեան աւելի շանսեր ունի Գէդի թէզը, բայց Ժօրէսը, որպէս հմուտ տակտիկոս, մի բանաձեւ է առաջարկել, որ ընդունում է սկզբունքով Գէդի բոլոր հիմնական կէտերը, բայց միեւնոյն ժամանակ հող է թողնում համաձայնութեան գալու. Ժօրէսի բանաձեւը յանձնված է մի մասնաժողովի, որը վերամշակելու է այդ բանաձեւը և կազմելու է նրա վերջնական բնագիրը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 նոյեմբերի։ Ստախովիչը հոկտեմբերի 17-ի Դաշնակցութեան ընդհանուր ժողովին ուղարկել է հետեւեալ հեռագիրը. «Դատաստանական պալատի յատուկ կազմը զրկում է ինձ ամեն հնարաւորութիւնից՝ փութալ և մասնակցել ժողովին, որպէսզի խօսեմ, ընտրութիւնների ժամանակ, ձախակողմեան յեղափոխականների դէմ կռուելու համար. բոլոր չափաւոր առաջադիմականների միացումը անպայման անհրաժեշտ է. այդ անյետաձգելի խնդիրն է, որ դրված է բոլոր ծրագրային տարաձայնութիւնների առաջ. միայն, միմիայն դրա մէջ է կայանում ապագայ Դումայի յոյսը՝ ստեղծել իսկական սահմանադրական կազմ, ռուսական ազատութիւն և կուլտուրա»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի։ Խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան անդամների առաջին ընդհանուր ժողովը, Հէյդէնի նախագահութեամբ, որոշեց քաղաքի բոլոր մասերում կազմել թաղային կօմիտէններ, որոնք հսկելու են քաղաքային կօմիտէնների գործունէութեան վրա։ Անդամներից մէկի յարուցած այն հարցի առիթով, որ երբ կուսակցական ծրագրի մէջ հրէական հարցը անորոշ և պարզ չէ դրված,—ժողովը վճռեց՝ հրէական հարցը չը բաժանել ընդհանուր ծրագրից։

ՎԼԱԴԻՄԻՐ, 6 նոյեմբերի։ Մամուլի գործերի Մոսկվայի կօմիտէտի հրամանով Անդրեյէվի տպարանում գրաված է սահմանադրական-ռամկավար կուսակցութեան կոչը։—«Владимірецъ» լրագրի խմբագրութեան մէջ խուզարկութիւն կատարվեց։

ՀՌՈՄ, 6 նոյեմբերի։ Ս. Պետրոս տաճարի մէջ նոյեմբ. 5-ին, պատարագի ժամանակ, բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ պայթում առաջացաւ, որը, սակայն, ոչ ոքի վնաս չը պատճառեց, բայց որը մեծ իրարանցում գցեց հասարակութեան մէջ. գտնվեց մի թիթեղեայ արկղիկ, որի մէջ կար վառօդ և մեխեր։ Քննութիւնը առայժմ չէ պարզել, թէ ո՛վ էր դրել այդ արկղիկը։ Ներքին գործերի մինիստրութիւնը 1000 լիր է խոստացել նրան, ով կը բռնէ յանցաւորի հետքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 14-ին Պետերբուրգում գումարվելու է ազնուականների համակայսերական համագումարը։

ՍԱՐԱՏՈՎ, 6 նոյեմբերի։ Հոկտեմբերականների նախընտրական ժողովը հեռագրել է Թագաւոր Կայսրին հետեւեալը. «Ամենաողորմած Թագաւոր! հոկտեմբերի 17-ի Դաշնակցութեան Սարատովի մարմինը նախընտրական ժողով գումարելով և աղօթելով Քո առողջութեան և թանգագին հայրենիքի բարեկեցութեան համար, իր ամենախորին զգացմունքներն է յայտնում Քեզ, Թագաւոր, և խոստանում է բոլոր ուժերը լարել՝ Դումա ուղարկելու համար այնպիսի անձինք, որոնք վայելեն Քո վեհագոյն վստահութիւնը, որոնք ընդունակ լինեն անձնուրացութեամբ աշխատել հայրենիքի օգտի համար—Քո—հոկտեմբերի 17-ի մանիֆէստով ողորմածաբար ազդարարած բարենորոգումները մտցնելու սրբազան գործում»։

7 նոյեմբերի

ՎԱՐՇԱՎԱ, 6 նոյեմբերի։ Բռնված են Բոգովօ կայարանում պօստային գնացքի կողոպտման մասնակիցներից 20 հոգի և ղեկավարիչ 2 ինտելլիգենտ անձնաւորութիւն։ Յարձակումը կազմակերպել են լեհական սօցիալիստիքական կուսակցութեան Վարշավայի և Լօձի մարմինների անդամները։—Բռնված են 10 հոգի, որոնք պատրաստվել էին յարձակվել Պետերբուրգ—Վարշավա երկաթուղագծի Զամօյսկայա կանգնատեղիում (платформа) պօստային գնացքի վրա. Նրանցից խլված է 10 ռումբ։

ԼՕՆԴՕՆ, 6 նոյեմբերի։ «Մօրնինգ-Պօստը» ասում է, որ մօտիկ ապագայում թերեւս անգլօ-ռուսական համաձայնութիւն կայվի այն մտքով, որ երկու կողմերն էլ հրատարակելու են իրանց քաղաքական դեկլարացիաները։ Լրագիրը ասում է, որ եթէ Ռուսաստանը այժմ հրաժարվել է Պարսկաստանը, Աֆղանիստանի մի մասը, Չինական Թիւրքեստանը և Տիբէտը միացնելու միտումով կազմած իր նախկին նախագծերից և մտադիր է բաւականանալ այժմ իր ունեցած տերիտօրիաներով, և եթէ նա իր այդ մտադրութիւնները արտայայտէ ձեւական արձանագրութեամբ, անկասկած է, որ Անգլիան էլ իր կողմից կարող է ձեւակերպել իր քաղաքականութիւնը—Տիբէտում և Պարսկաստանում քաղաքական միջամտութիւնից խուսափելու և Աֆղանիստանի անկախութիւնը չը խախտելու մտքով։ Այս օրինակ յայտարարութիւններով կարելի է համաձայնութեան հասնել յիշեալ երկրների վերաբերեալ հարցերի նկատմամբ։ Պարսկաստանում երկու մեծ պետութիւններն էլ ունենեն կարեւորագոյն շահեր. եթէ նրանք համաձայնեն յարգել Պարսկաստանի անձեռնմխելիութիւնը և անկախութիւնը, բնական է, որ նրանք կարող կը լինեն հաւասար իրաւունքներով վստահութիւն ապահովել իրանց համար, որոշելով ազդեցութեան շրջանը—աշխարհագրական սահման կամ բաժանման գիծ որոշելով։ Ապա, եթէ Ռուսաստանը համաձայն է Տիբէտն իրան թողնել, այն դէպքում Անգլիան էլ չի կամենայ միջամտել Տիբէտային գործերին։ Իսկ ինչ վերաբերում է Աֆղանիստանի գործերին, Ռուսաստանը այժմ արդէն իրաւունք չունի խառնվել։ Անգլիայի վզին այդօրինակ պարտականութիւն չէ կապած, սակայն Անգլիայի և Աֆղանիստանի յարաբերութիւնները բնաւ չեն սասանեցնում Ռուսաստանը։ Այս են հիմունքները սպասվելիք անգլօ-ռուսական համաձայնութեան, որի օգուտը նրանումն է, որ հէնց որ երկու կողմերի անկեղծութիւնը բացայայտ կը լինի, այն դէպքում կը վերացվեն եղած թիւրիմացութիւնները և ապագայում երկու կողմերին էլ դիւրին կը լինի ազատվել ժողովրդական կրքերը յարուցող վերացական թշնամութիւնից և նախապաշարմունքներից, որոնք յաճախ բարդում են պետութիւնների յարաբերութիւնները»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի։ Պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը, որով Զարուդնի, Սիդօրենկօ, Ելիսէեվ և ուրիշ մի քանի փաստաբաններ—1905 թ. հոկտեմբերի 15-ին, երբ պատրաստւում էին դատարանում գործադուլ առաջացնել դատարանին վիրաւորելու համար—դատապարտվում են 7 օրեայ բանտարկութեան։ Մեղադրեալները վճարաբեկ գանգատ են ներկայացնելու սենատին։—Բժշկական խորհուրդը բացատրել է, որ այն անձինք, որոնք չունեն կառավարչական կամ այլ մասնաւոր գիմնազիաների 6 դասեան ուսման վկայական,—ատամնաբուժական ուսումնարաններում չեն ընդունվի երբէք։

ԲԵՐԼԻՆ, 6 նոյեմբերի։ Ժամանեց դանիական կայսերական խումբը, որին դիմաւորեցին կայսրը, կայսրուհին և պրինցները։ Միապետները կրկնակի համբուրվեցին։ Հանդիպումը վերին աստիճանի սրտառուչ էր։

ՊԱՐԻԶ, 6 նոյեմբերի։ Բօրսային գների մասին խօսելով «Ժուրնալը», «Էխօ-դէ-Պարի», «Էկլէր» և «Լիբերտէ»-ն, ընդգծում են, որ ռուս ֆօնդերի բարձրանալու ամենագլխաւոր պատճառը ներքին դրութեան բարելաւումը, մտքերի աստիճանաբար հանդարտութիւնը և գործադուլների դադարումն են։

ԿԱԶԱՆ, 6 նոյեմբերի։ Կրեստօվնիկովի գործարանում ձերբակալված է տեղական ռազմիկ խումբը։ Կազմակերպութիւնը խեղդված է իր սաղմի մէջ։ Գրաւված է շատ լաւ կարգաւորված թուրքական տպարան։

ՄՕՍԿՎԱ, 6 նոյեմբերի։ Հոկտ. 17-ի դաշնակցութեան կենտրօնական կօմիտէտը դիմել է կուսակցութեան անդամներին, խնդրելով՝ իրանց յայտարարութիւնները տպել միայն կուսակցութեան բարեկամ մամուլում։ Գաւառի հետ կապ հաստատելու համար—կօմիտէտը առաջարկում է դաշնակցութեան տեղական մարմիններին՝ մասնակցել կօմիտէտի պարբերական նիստերին շաբաթ օրերը։—Բէլէնցովի գործը վերջացրած է։ Նա արագ առողջանում է։ Գործը կը քննվի դեկտեմբերի սկզբներին նահանգական դատարանում։

ԲԵՐԼԻՆ, 6 նոյեմբերի։ «Բերլ. Տագեբլատ» թերթի խմբագիրը Պարիզում տեսակցվել է մինիստր-նախագահի և արտաքին գործերի մինիստրի հետ։ Կլէմանսօն ասել է. «Պատերազմ ցանկանալ—կը նշանակէ խելագար պէտք է լինել։ Դէլկասէն նոյն պատճառով ընկաւ, որ նրա քաղաքականութիւնը կարող էր պատերազմ առաջացնել։ Պատերազմական քաղաքականութիւն մենք չենք կարող վարել, որովհետեւ պարլամենտը անմիջապէս մեզ կը հեռացնէ»։ Պիշօնը ասել է. «Գերմանիայի հետ տեղի ունեցած թիւրիմացութիւնները, ինչպէս կարելի է յուսալ, վերջացել են. մենք կամենում ենք բարելաւել մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ և այդ ցանկութիւնը գործով իրականացնել»։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մօրթու, վեներակ. և վիրաբուժու. հ.։
Չ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ՖԵՆԼԻՆԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ց. Գուլբենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաւոր.
Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1907 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Ցանկացողները՝ աւելի դիւրին ստանալու համար դիմում են հետեւեալ հասցէով. Թիֆլիս, Գարաջնիկի № 5, Մակար Չմշկեան։
Ե. Չ. 4—15

Լոյս տեսաւ եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ
1907 Թ.
„ՇԻՐԱԿ“
պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ պատկերազարդ
ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ բացի օրացուցական բաժնից պարունակում է վաճառականական, օրէնսգիտական, բժշկական, տնտեսական, ճանապարհորդական, արհեստագիտական, գիւղատնտեսական, կենսագրական, ռոմարագիտական, գիտական, բանաստեղծական-վերածնութեան մեղեդիներ, պատմական—Նաթան Հալլ (Ամերիկայի անկախութիւնից) Ազգային Ժողով (Ֆրանսիական յեղափոխութիւնից), Ռամկավարութիւն, Սահմանադրութիւն, Ի՞նչ է ազգութիւնը, Յեղափոխութիւնների պատմութիւնը, Տաճկահայոց սահմանադրութիւնը, Օգտակար խորհուրդներ, Գիտական զուարճալիք, Խնդիրներ, Վիճակներ, Ռեբուսներ և այլ և այլ հետաքրքիր տեղեկութիւններ։
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների պատմական բացատրութիւններ, հայոց ազգային սովորութիւններ, բժշկական, առողջապահական, թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, գիւղատնտեսական տեղեկութիւններ, խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց։ Ազգային քնար, վերածնութեան մեղեդիներ, նշանաւոր դէպքեր հայկական նորագոյն կեանքից և հայոց պատմութիւնից։ Տնտեսական, արհեստագիտական, խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւններ, նոր անեկդոտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական, յեղափոխական երգեր, լէլեներ. արկածալի և հերոսական դէպքեր յեղափոխական աշխարհից, հետաքրքիր տեղեկութիւններ ղուրանի և մահմեդական վարդապետութեան մասին, եայլն եայլն
Իւրաքանչիւր առաջին երեսի վրա կայ մի մի բանաստեղծական հատուած հայ և օտար նշանաւոր բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգային և հասարակական խնդիրները։
ՏԱԽՏԱԿԸ մի գեղարուեստական սքանչելի նկար է վեց գոյնով, պատրաստած լիտօգրաֆիայում, որ ներկայացնում է «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» զարդարված «Հայկական դրօշներով» (դերբեր), մի նկար, որ կարող է ջենեակի զարդ ծառայել։
«Շիրակ» օրացոյցները զարդարված են գունատիպ պատկերներով։
Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը կարող են ստանալ ձ ր ի։
Գները՝ ծոցինը 20 կ., պատինը 50 կ.։ Գումարով գնողներին ծոցինը 15 կ., պատինը 35 կ.։
Ցանկացողները թող շտապեն, որ պատուէրները կարելի լինի ճշտութեամբ կատարել։
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian (Caucase).
1—15 Կարապետ Ափինեան

ՀՐԱՒԷՐ
(վերջին)
Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու յարգելի ծխականները երրորդ և վերջին անգամ հրաւիրվում են ամսիս 12-ին, կիրակի օրը ժամը 12 ին, նոյն եկեղեցին, կատարելու նոր երէցփոխի ընտրութիւն՝ հանգուցեալ Նիկողայոս Գրիգորեանցի փոխարէն։
Աւագ երէց Ալէքսանդր Տէր-Յովհաննիսեանց
(Չ. Հ.) 1—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երեւանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նօտար Միքրովի։
(Ե.Հ.Չ.) 77—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. / երեկոյեան 6—7 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(Ա. Օ.) 48—150

ԲԺԻՇԿ
Ա. Միքիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների, № 33/15։
(Ա. Օ.) 49—100

Մեկնելու պատճառով
արժան վաճառվում է մի
ԱՄԱՐԱՆՈՑ.
որ գտնվում է Եալտայում, հայկական նոր կառուցված եկեղեցուն կից և որը բաղկացած է 30 սենեակներից բոլոր յարմարութիւններով—հովասուն այգի, վաննա, ջուր, ջրանցք և այլն։
Պայմանների մասին դիմել տիրոջը—Ялта Капилети, Садовая, собст. дача, или Ялта, Григорію ВартанянУ։
(Չ. Ու. Կ. 5—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(Կ.Չ.Ու.) 20—100

ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ
ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. «Սիրտ» գրքից 9 պատմ.		գերման.	40 կ.
2. Ժամանակը ոսկի		պատկեր.	40 »
3. Բաջ Աղասի			25 »
4. Սասունցի Յոհան	պատմ.		30 »
5. Խուլ Խաչիկ	վէպիկներ		25 »
6. Ծովինար			20 »
7. Շէն Թագաւորի աղջիկ			20 »
8. Երկու աղբերացեղ.			30 »
9. Աստուած աղքատի կերպում			20 »
10. Անմեռ աշխարհ			8 »
11. Հէքիաթներ			30 »
12. Աստուած չը ճանաչող	պատկեր.		10 »
13. Գալօ Ափօ և Խաչան			12 »
14. Երկասիրութիւններ ա. կապուկ			50 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, գումարով ցանկացողները իրան՝ Քամալեանց Ս.-ին, Ներսիսեան դպրոց։ (Չ. Ու. Կ.) 17—20

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետեւեալ գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՑՈԼԱԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԵՉԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
Ի՛ՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
Եւ թարգմանած՝
ՈԴԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ։
Ցանկացողները կարող են դիմել նաեւ.
Тифлисъ, Орбеліановск. ул. № 24 Левонъ Меликъ-Адамянъ.
(Չ. 1) (Չ) 20—20

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում, վաճառվում են Ղազարոս Աղայեանցի հետեւեալ աշխատութիւնները
Ուսումն մայրենի լեզուի ա. տարի 23-րդ պատկերազարդ տպ. . . . . — 20 կ.
» » » երկ. տ. 10-րդ պատկերազարդ տպ. . . . . — 40 կ.։
» » երր. տ. 6-րդ տպ. — 70 կ.։
» չորր. տ. առաջին տպ. — 90 կ.։
Անահիտ, հին զրոյց, երր. տպագ. — 15 կ.։
Արութիւն և Մանուէլ վէպ երր. տ. — 60 կ.։
Բանաստեղծութիւնների ժողովածու, 1 ր. 50 կ.։
Հայկական հնչիւնների մասին, . — 25 կ.։
Գումարով գնողներին սովորական զիջումն է լինում։ Օտար տեղերից դիմել Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ, արտասահմանից՝ Librairie Central à Tiflis.
Չ. 9—10

ԵՐԱԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՍԱՊՈՆ
ԽՈՅԼԻ ԴԵՄ
կտորի գինը 25 և 35 կոպ.
Ծախվում է ամենայն տեղ։
Т-во Парфюм. фабрики провизора
А. М. ОСТРОУМОВА
МОСКВА.
(Չ.) 5—10

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչեւ 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կազբեկսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազբեկսկի փողոցից № 2.
(Ա. Օ.) 275—300

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Պատրաստում է աշակերտներ ու աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ընդունում է նաեւ բեպետիրովկա։ Հասցէն «Մշակի» խմբագրատանը։
(Ա. Օ.) 4—10

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5